№ 277 ՈՒՐԲԱԹ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 277

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ՍՄԱՆ ՏԵՂ 5 կՕպ.

Թիֆլիսում դրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենլեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱԾ **1912** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 բ., 10 ամսվանը՝ 9 բ., 9 ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., 7 և 6 ամսվանը՝ 6 բ., 5 ամսվանը՝ 5 բ., 4 ամսվանը՝ 4 բ., 3 ամսվանը՝ 3 բ., 2 ամսվանը՝ 2 բ., 1 ամսվանը՝ 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միւնոյն ժամանակ 40 կ. նամակագրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Концертный залъ Артистическаго О-ва
ЛЕКЦІИ
Члена Государственной Думы
Ѳедора Измайловича
Родичева

Во вторникъ, 20-го декабря, ПЕРВАЯ ЛЕКЦІЯ: „Освобожденіе крестьянъ".

Въ четвергъ, 22-го декабря, ПОСЛѢДНЯЯ ЛЕКЦІЯ: „А. И. Герценъ и его произведенія".

НАЧАЛО ЛЕКЦІЙ ВЪ 8½ ЧАС. ВЕЧЕРА.
Билеты ежедневно продаются въ кассѣ театра Артистическаго О-ва отъ 10 до 2-хъ и отъ 5 до 9 вечера.
(ու.կ.) առ. 1169. 3—2

ՏՕՆԵՐԻՆ
ԸՆԾԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԶԳԵՍՏԱՅՈՒ ԿՏՈՐՆԵՐ 1 Ր. 80 Կ. ՍԿՍԱԾ։
Ցուցադրված են մանցորդներ, նոյնպէս եւ առանձնացված են ապրանքներ բոլոր բաժանմունքներից։
ԳՆԵՐԸ ՊԱԿԱՍԵՑՎԱԾ ԵՆ։
ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼԵԱՆՆԵՐ
Գօլովինսկի պր., Կադէտսկի Հօրպուսի դիմաց։
(ա.օ.) առ. 1171. 2—1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՒՔՈՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—54

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԴԱՓՆԻՆԵՐԸ

I

Ի՞նչ եղաւ։
Շատ բան եղաւ։
Կաթողիկոսական ընտրութիւնը փոքր-ձաքար դարձաւ մեր գործողներից շատերի համար։
Եղաւ և այն, որ մեր հակառակորդները մերկացան հասարակութեան առաջ իրանց ամբողջ էութեամբ։
Պարզվեցին կատարված դերերը։
Նախ և առաջ թեկնածուների մասին։

Այն ժամանակ, երբ մենք դրել էինք մեր թեկնածուի՝ Օրմանեանի անունը և նրա պատճառով ստանում էինք մեզ համակրողների ողջոյնները և մեր հաղթանակորդների հայհոյանքները, այդ ժամանակ անորոշութիւնը պակասում էր մեր հակառակորդներին, և մենք մինչև վերջին րոպէն չը լսեցինք նրանցից մի կարական խօսք։

— Ո՞վ է ձեր թեկնածուն,—հարցնում էինք մեր հակառակորդներին։

Մեր այդ հարցի պատասխանը լինում էր խուսափողական։

Հանդամանքները այնպէս էին դասաւորվել, որ մենք, հայ ժողովրդի կէսի տրամադրութեան ներկայացուցիչներս, ընտրական կանոնների թերութեան շնորհիւ և ընտրական զեղծումների պատճառով, կազմում էինք պատգամաւորական ժողովի փոքրամասնութիւնը։ Դա արհեստական կերպով էր դարձված փոքրամասնութիւն։ Բայց և այնպէս դա փոքրամասնութիւն էր, և նրա դէմ կանգնած էր ձայների մի մեծամասնութիւն, որը իրապէս տէր էր դարձել ընտրական գործին։

— Ինչ ուզենամ, այն էլ կանեմ,—ասում էր մեծամասնութիւնը։—Ում ցանկանամ, նրան էլ կընտրեմ։ Փոքրամասնութիւնը պէտք է հպատակվի։ Կանոնները նպաստաւոր են մեզ համար, և մենք պէտք է օգտվենք նրանցից ամենամեծ չափով և ծաւալով։

Երեք օր շարունակ տեւում էին բանակցութիւններ մեծամասնութեան և փոքրամասնութեան միջև։

Փոքրամասնութիւնը ասում էր մեծամասնականներին հետևեալը.

— Վերապահեցէք ձեզ համար քառանուն ցանկի մէջ երեք տեղ և տուէք երեք անուն, իսկ մեզ յատկացրէք միայն մի տեղ՝ մի անուն տալու համար։ Զորս քուէտուփից երեքը կը լինի ձերը և միայն մէկը կը լինի մերը։

Պատասխանը եղաւ բացասական։ Ոչ, ոչ և ոչ։

Ամբողջ ընտրական գործը մի սոսկալի ողբերգութիւն էր։ Զեղծումներ կատարված էին այնպիսի մեծ քանակով, որ պատգամաւորներս զարհուրում էինք առաջացած բարոյական ճահիճից։ Մատնակցել, արդեօք, այդպիսի ընտրութիւններին թէ հեռանալ—ահա այն հարցը, որ հանդէս եկաւ մեր առաջ հէնց առաջին րոպէներից։ Մենք մտածեցինք, թէ գուցէ կարելի կը լինի մի որոշ աստիճան բարոյել դրութիւնը, չքացնել զեղծումների ֆիզիկական ազդեցութիւնը և հաստատելով համաձայնութեան մի կամուրջ՝ մշակել փոքր ի շատէ բաւարար մի պայմանախօսութիւն ընտրելիների վերաբերութեամբ։

— Ոչ մի զիջում, ոչ մի առարկութիւն,—աղաղակում էին փրփրած մեծամասնականները։

Մեծամասնութիւնը վճռել էր բացառիկ տէր լինել դրութեան և հրամայողական պատգամախօսութեամբ կարգադրել ամեն բան։

Մենք հեռացանք։

Ասպարէզը մնաց մեծամասնութեան։

Եւ նա արտայայտվեց։

Մեծամասնութեան կատարած հասարակական գործի արդիւնքը դրված է հրապարակի վրա։ Եւ հրճվողը թող հրճվի։

Քեզ ենք դիմում, ով մեծամասնութիւն. գոհ ես արդեօք քո կատարած գործից։ Դու, որ ոչինչ զիջում չէիր անում փոքրամասնութեանը, ստացար լիակատար ազատութիւն։ Մենք կարող էինք քեզ խանգարել և մեր քուէներով քո թեկնածուներին յետ և առաջ դասաւորել։ Մենք հեռացանք և քեզ չը խանգարեցինք ազատօրէն գործելու։ Դու արտայայտեցիր քո իւրատեսակ կորովը, դու ասացիր քո ըմբռնած լաւագոյնը, դու տուիր քո քուէների բազմութիւնը այն անձին, որ քո կարծիքով արժանաւորագոյնն էր հայ հոգևորականութեան մէջ։ Եւ վերջապէս՝ մեր բազմաթիւ հարցերին քո ցանկալի թեկնածուի մասին՝ դու տուիր քո պատասխանը։

Մենք քեզ հնարաւորութիւն տուինք, որ քո գործի փառքը քոնը լինի, ուստի թող քոնը լինի նաև հասարակական պատասխանատուութիւնը, եթէ կայ այդպիսին։ Մենք միայն այժմ իմացանք, թէ ով է քո համազգային ընտրելին, քո արժանաւորագոյն ճառնաչածը։ Այո, պէտք է խոստովանենք, մենք մասնակից չեղանք պատմական համազգային այն մեծագործութեան, որով դու մտադիր ես պայծառացնել էջմիածինը։

Մենք դրել էինք Օրմանեանի անունը։

Դու ընտրեցիր Սուրէնեանին։

Օրմանեան և Սուրէնեան։ Ո՞րը պէտք է լինէր նրանցից։

Մենք պնդում էինք, որ Օրմանեանը արժանաւորագոյնն էր ներկայ հոգևորականութեան մէջ, և աշխատում էինք նրա թեկնածութիւնը առաջ տանել՝ իբրև աւելի ձեռնհաս, աւելի կարող, աւելի պատրաստված, աւելի փորձված, աւելի գործունեայ, աւելի հեղինակաւոր անձի։

Դու աւելի հմուտ, աւելի ընդունակ համարեցիր Սուրէնեանին և աջողեցիր նրա ընտրութիւնը։

Հասարակութեան առաջ պարզվեցին դրութիւնները։ Եւ անշուշտ կը գնահատվի համեմատական գերազանութիւնների ներկայ շփումը։

Թող դավինները պակեն պատմական մեծամասնութեան եռանդուն զեկավարների պատմական գլուխները։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Դուրեան արքեպիսկոպոսի տուփի մէջ գտնված է մի տոմս, որ պրոկուրօրի կարգադրութեամբ կցվել է ժողովի արձանագրութեան։ Տոմսի բովանդակութիւնը հետևեալն է.

Օրէնքի պաշտպան պ. պրոկուրօրին։

Վերջին պատուն, խղճիս տանջանքէն ազատելու համար, կը յայտարարեմ, թէ այս ընտրութիւնն եղաւ ճնշումով և էնթրիքով և պատգամաւորներէն շատերը այս համոզումն ունին, մասնաւորապէս տաճկատենցիներ, թէև ստիպուած են լռել։

Աշխարհական պատգամաւոր մը

Ղարաբաղի թեմի աշխարհական պատգամաւոր Սամսոն Զէրքէզեանը ստացել է Շուշուց հետևեալ հեռագիրը, ուղարկված դէպի Էջմիածին.

«Շուշի, 13 դեկտեմբերի

«Շուշում գտնվող Ղարաբաղի թեմի պատուիրակները, խորապէս վրդովված այն ապօրինի գործողութիւններից, որոնք տեղի են ունեցել ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, լիովին համակրում են ձեզ և ձեր հետ գործող պատգամաւորներին։

«Միանում ենք բողոքին, որ դուք արտայայտել էք աղաղակող անարդարութիւնների դէմ։

«Շնորհակալութիւն ենք յայտնում, որ արդարացրիք մեր ակնկալութիւնները»։

Ստորագրել են թեմական պատգամաւորի անձնափոխանորդ խնժեանը Դանդաղսազեան և 24 պատուիրակներ։

—

Երէկ առաւօտեան Էջմիածնից Թիֆլիս հասաւ թիւրքահայ պատգամաւորների մի մասը։ Միւս մասը Էջմիածնից՝ Ալէքսանդրոպոլի վրայով՝ անցել է սահմանը—իրանց տեղերը գնալու համար։ Թիֆլիս եկածների մի մասը երէկ երեկոյեան մեկնել է Բաթում, որտեղից այսօր երեկոյեան աւստրիական կամ ռուսական շոգենաւով պէտք է մեկնէ Թիւրքիա։

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆԻ ԲՈՂՈՔԸ*)

Ի. ս. սինոդն սրբոյ Էջմիածնի.
Զնկուշի պատգամաւոր երդ.-հաւ.
Գ. Ենգիբարեանից
Բողոք

Ներքին գործերի մինիստրի բացատրութեան համաձայն՝ դեկտ. 10-ին պատգամաւորների ընտրական ժողովը ստուգեց պատգամաւորների լիազօրութիւնները և գտաւ բոլորը օրինաւոր։ Ես պատկառելի ժողովին յայտնեցի, որ պատգամաւորներից արժանապատիւ Սիօն վարդապետի, զերապատիւ Եփրեմ եպիսկոպոսի և Բաղրատ ու Մատթէոս վարդապետների լիազօրութիւնները, ինչպէս և մի քանի ուրիշներինը անկանոն եմ գտնում, յարակցելով որ ես անկանոն եմ համարում ընդհանրապէս այն միջոցները, որոնք գործ են դրվել Թիւրքիայում պատգամաւորներ ընտրելու ժամանակ։ Պատգամաւորական ժողովը վճռեց, որ ես իրաւունք չունեմ ընտրութիւնների ընդհանուր միջոցների ապօրինաւորութեան մասին ապացոյցներ բերելու, և ես վերապահեցի իրաւունք բողոքելու սինոդին և ապա ըստ օրինի վարվելու։ Ես գտնում եմ, որ պատգամաւորական ժողովը իրաւունք չունէր նախ արգելելու ինձ ապացոյցներ տալու, որ Թիւրքիայում ռուսահայերից պատգամաւորներ ընտրելու ժամանակ գործադրվել են հակաօրինական միջոցներ, որոնք այդ ընտրութիւնները միանգամայն ապօրինի են դարձնում։

Ապացոյցները հետևեալներն են. ընտրական գործի մէջ կայ մի գրութիւն հայր Սիօն վարդապետի ընտրութեան վերաբերեալ յանուն սրբազան տեղակալի, որից երևում է, թէ Կ. Պոլսի պատրիարք. տեղապահ զեր. Մանկունի արքեպիսկոպոսը յանձնարարել էր ընտրելու արժ. Սիօն վարդապետին, ուրեմն հոգևոր իշխանութիւնը միջամտել է ընտրական գործին և պատգամաւորը ընտրվել է ճնշման տակ։ Լրագրերներում տպագրված էր, թէ զեր. տեղակալ Սուրէնեան արքեպիսկոպոսը ուղարկել է Կ. Պոլսի տեղապահ սրբազան Մանկունի եպիսկոպոսին մի ցուցակ ռուսահայ մարդկանց, ինչպէսով որ թիւրքահայ թեմերից այդ անձինք ընտրվեն պատգամաւորներ դեկտեմբերի 11-ին կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու համար։ Թէև սրբազան տեղակալը կարևոր համարեց հերքելու լրագիրներում այս լուրը, բայց ընտրական գործի մէջ եղած տեղեկութիւնները միանգամայն ապացուցանում են, թէ սրբազան տեղակալ Սուրէնեան և թէ սրբազան Մանկունի արքեպիսկոպոսները ուժգին պրոպագանդա են արել ընտրութիւնների ժամանակ և միջամտել են գործին և դրանով իբրև իշխանաւոր ճնշում են գործել ընտրողների վրա։ Գործի մէջ կայ զերապատիւ Մանկունի արքեպիսկոպոսի նամակը յանուն տէր տեղակալի, որի մէջ սրբազան տեղապահ Մանկունի արքեպիսկոպոսը ներողութիւն է խնդրում, որ ուղարկված ցուցակով չեն ընտրվել պատգամաւորները, այլ մի քանի փոփոխութիւններ են եղել։ Ես ներկայացրի ժողովին «Մշակ» թերթի մի համարը, որից երևում է, թէ Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում հրատարակվել է սրբազան Սուրէնեան արքեպիսկոպոսի մի հեռագիրը յանուն տեղապահի ի Պոլիս, որով տէր տեղակալը խնդրում է առաջուց ցոյց տրված անունների տեղ ընտրել տալ սրբազան Եփրեմ և Խորէն եպիսկոպոսներին, Բաղդէն, Մատթէոս և Բաղրատ վարդապետներին։ Պարզ է ուրեմն, որ այս ընտրութիւնները կատարվել են հոգևոր բարձր իշխանութիւնների ճնշման ներքոյ և հակառակ Փոխարքայից տրված 1865 թուականի հրամանագրի § 16-ի մտքին. ուստի և ես այս հիման վրա բոլոր այն պատգամաւորների լիազօրութիւնները, որոնք վերև յիշված են և նոյնպէս սրբազան տեղապահ Սուրէնեանի ուղարկած ցուցակով են ընտրված, ապօրինի եմ համարում։ Իսկ ցուցակ ուղարկված լինելը ապացուցվում է թէ գործի մէջ եղած գոյութիւններով և թէ լրագրական տեղեկութիւններով, որոնք տակաւին հերքված չեն սրբազան տեղապահ Սուրէնեանի կողմից։

Էջմիածին, 11 նոյեմբերի

ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ԲՈՂՈՔԸ

Ս. Էջմիածնի ս. սինոդին
Բողոք
Ամերիկայի թեմի պատգամաւոր
Մաղաք Գ. Պէրպէրեանէն

Ընդհանուր համազգային ժողովը, ինչպէս և ս. սինոդը Ամերիկայէն ընտրուած երկու աշխարհական պատգամաւորներէն լիազօր ճանչցաւ պ. Հ. Ամպրուկեանին։ Այդ վճիռը ես կը գտնեմ անվաւեր հետևեալ պատճառներով։

ա) Մկրտիչ Ա. կաթողիկոսի տուած կոնդակի համաձայն (6 սեպտ. 1902 ամի, թիւ 1226) Ամերիկայի համար հաստատուած է նոր սահմանադրութիւն մը, և ամերիկահայ առաջնորդական թեմը պարտի վարել «ըստ այմմ» իր եկեղեցական գործերը։ Ուրեմն՝ սահմանադրութիւնն է միակ օրէնքը և կանոնը, որու հիման վրայ Ամերիկայի հայ ժողովուրդը կառավարուած է և պիտի կառավարուի իր եկեղեցական և այլ գործերուն մէջ։

Այն ամենը, ինչ որ դուրս է սահմանադրութենէն և համապատասխան չէ անոր կանոններուն, միանգամայն ապօրինի է։ Ուստի՝ դատում փաստերուն և իրողութեանց ի նկատի ունենալով որ սահմանադրութեան յօդ. 25-ի համաձայն Ամերիկայի մէջ գտնուած հայ. եկեղ. ժողովրդեան միակ օրինաւոր ներկայացուցիչ մարմինն է երեսփոխական ժողովը, որ կը կազմուի առաջնորդական և հովուական թեմերու կողմանէ ընտրուած երեսփոխաներէ և պաշտօնավարող եկեղեցականներէ։

Նոյն սահմանադրութեան 29-րդ յօդուածի համաձայն՝ երեսփ. ժողովին կը նախագահէ առաջնորդը կամ տեղապահը։

Համազգային ժողովը և ս. սինոդը իմ ընտրութիւնս անվաւեր նկատեցին, որովհետև գիս ընտրող ժողովին չէ նախագահած տէր Պողոս վ. Գաֆթանեանը, իբրև առաջնորդական փոխանորդ։ Այդ առարկութիւնը կարող չէ բեկանել երեսփ. ժողովի ընտրութիւնները, որովհետև նախ՝ նոյեմբերի 12-ին Ուստոր գումարուած երեսփ. ժողովին նախագահած է Վէսթ Հօրօրքի թեմակալ հովիւ Պողոս վ. Շահնազարեան, ապա՝ որ այդ ժողովին մէջ խնդիր յարուցուած էր հ. Գաֆթանեանի անձին եւ պաշտօնավարութեան մասին (յօդ. 29)։

Երկրորդ, հ. Պողոս վ. Գաֆթանեան նոյեմ-

*) Այս բողոքը տրվում է պատգամաւորների ժողովի նախագահ Սամսոն Ցարութիւնեանին՝ պատճառը ընթացք տալու համար։

քեր 12-ի ժողովին չէր կրնար նախագահել, որովհետև Նիւ-Եորքի հովուական պաշտօնէն դադրած էր, և ուրեմն սահմանադրութեան յօդ. 25-ի համաձայն չէր կրնար ճանչցուիլ իբրև «պաշտօնավարող եկեղեցական»։

Երրորդ, նոյեմբեր 12-ի երեսփ. ժողովին նախագահող հայր Շահնազարեան Վէսթ Հօրօքընի թեմական հովիւ ընտրուած էր վեց ամիս առաջ, Գաֆֆանեան վարդապետի գիտութեամբ, ուստի Շահնազարեանի նախագահութիւնը ամէն կերպով օրինաւոր էր։

Իրողութիւնը այսպէս ըլլալով՝ նոյեմբեր 12-ին Ուստը գումարուած երեսփ. ժողովին նիստը և ընտրութիւնները պէտք է համարել վաւերական, որովհետև թէ ձևական կողմէ և թէ ըստ էութեան այդ ժողովը, իբրև միակ ներկայացուցչական մարմին յանձին Ամերիկայի 16 թեմերու, միաձայն հաւանութեամբ և համաձայն սահմ. յօդ. 30-ի, ընտրեց վիս իբրև աշխարհական պատգամաւոր կաթողիկոսական ընտրութեան, և միևնոյն նիստին մէջ մերժեց իրաւունք տալ հ. Գաֆֆանեանի՝ ներկայացնելու Ամերիկայի առաջնորդական ընդհանուր վիճակն իբրև առաջ. փոխանորդ, և ընտրեց իր հոգևորական պատգամաւորը յանձին ամէն. տէր Գէորգ արքեպ. Սուրէնեանին։

Հայր Գաֆֆանեան առարկեց, թէ նոյեմբեր 12-ի երեսփ. ժողովը անվաւեր պէտք է համարել այն պատճառաւ, որ նոյն ժողովին իբրև թէ պաշտօնավարող եկեղեցականներ ներկայ եղած չեն։ Անդրադառնալով փաստերուն և իրականութեան՝ պէտք է ըսել, որ տարւոյս փետր. 26-ին ազգիս հոգեւոյս հայրապետ Տ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոս Իզմիրլեանի բարձրագոյն հրամանաւ Ուստը գումարուած երեսփ. ժողովին, որուն կը նախագահէր հ. Գաֆֆանեան որպէս առաջ. փոխանորդ, ներկայ էին 24 երեսփոխաններ, որոնց 5-ը պաշտօնավարող եկեղեցականներ էին, և այդ ժողովը ճանչցուեցաւ վաւերական ու հաստատուեցաւ նոյն ինքն հ. Գաֆֆանեանէ, և համաձայն սահմ. յօդ. 32-ի չորս տարի ժամանակով իրաւունք ունի պաշտօնավարելու։ Ու երբ նոյեմբ. 12-ին գումարուեցաւ նոյն երեսփ. ժողովը, պաշտօնավարող եկեղեցականներէն միայն մէկը իր պաշտօնին մէջն էր, որուն երեսփ. ժողովի հրաւիրագիր ուղարկուեցաւ, իսկ մնացեալներն արդէն հրաժարած կամ հրաժարեցուած էին ամիսներ առաջ իրենց պաշտօններէն։

Ուրեմն, նոյեմբ. 12-ի երեսփ. ժողովը, որուն ներկայ էին 20 երեսփոխաններ 21 ձայնով, իր օրինական կազմին մէջ էր և իրաւասու՝ ընտրել այս կամ այն անձը իբրև կաթողիկոսական պատգամաւոր սահմ. յօդ. 30-ի համաձայն, որ իրաւունք կուտայ անօրինել այն ամէն խնդիրները, որք կը վերաբերին առաջնորդական ընդհ. վիճակին։

Ահա այս օրինական ճանապարհով ընտրուած եմ ես աշխարհական պատգամաւոր։

Դառնանք համազգային ժողովի և ս. սինոդի կողմէն լիազօր ճանչցուած պատգամաւոր պ. Հ. Ամպրուկեանի ընտրութեան պարագաներուն։

Պ. Ամպրուկեան ընտրուած է միմիայն 8 թեմերու կողմէն, և այդ թեմերու ներկայացուցիչները ընտրուած են այնպիսի ժողովներու մէջ, որոնց նախագահած են քանի մը անպաշտօն հովիւներ և որոնց մասնակցել մերժած են Ամերիկայի 16 թեմերու պատ. հոգաբարձութիւնները. ուստի՝ այդ ժողովը ըստ էական չէ կրնար համարուիլ այն ներկայացուցչական ժողովը, որ իրաւունք ունենար և լիազօրութիւն՝ ընտրելու այս կամ այն անձը պատգամաւոր, այսինքն ներկայացուցիչ Ամերիկայի հայ առաք. եկեղ. առաջնորդական վիճակին։

Այն առարկութիւնը, որ ամենայն հայոց կաթողիկոսական տեղակալը մերժած է ընդունիլ հ. Գաֆֆանեանի հրաժարականը, և կամ Ամերիկայի առաջնորդական վիճակին կողմէ կրկնակի տրուած բողոքը՝ Գաֆֆանեանի անձին ու պաշտօնավարութեան դէմ՝ անտես է թողեր, և սինոդը հրահանգ մը ղրկած է էջմիածնէն, թէ ինչ ձևով պէտք է կատարել պատգամաւորի ընտրութիւնը, չեն կարող ունենալ ոչ մի իրաւաբանական զօրութիւն, որովհետև նախ՝ այդ հրահանգը պարտաւորիչ է միայն Անդրկովկասի համար և ոչ Ամերիկայի համար, որը ղեկավարուած է և պիտի ղեկավարուի Արիմեան կաթողիկոսի կողմէն հաստատուած սահմանադրութեամբ։

Երկրորդ, սինոդը ոչ լիազօր է և ոչ ալ իրաւունք ունի այս թէ այն հրահանգով ի չիք դարձնել սահմանադրութիւն մը, որ հաստատուած է կաթողիկոսի մը կողմէն, որովհետև այդ՝ սինոդի իրաւունքներէն վեր է։

Երրորդ, Ամերիկայի 16 թեմերէն 14-ը, այսինքն ամերիկահայ գաղթականութեան ստուար մեծամասնութիւնը, կաթողիկոսական ընտրութենէն դեռ 6 ամիս առաջ բողոքեր է հ. Գաֆֆանեանի առաջ. փոխանորդութեան դէմ և չէ ճանչցած զինքը այդ պաշտօնին մէջ։ Մեզիկ ժողովրդի ձայնը և այն պարագային, ուր ժողովուրդն է միակ տէրը և տնօրէն իր հոգևոր գործերուն, ինչպիսին է կաթողիկոսական ընտրութիւնը, կը նշանակէ հիմնայատակ ընել դարերէ է վեր սրբազործուած ու նուիրագործուած ընտրողական սկզբունքը։

Ի նկատի ունենալով վերոյիշեալ պատճառաբանութիւնները, ես, ներքոյ ստորագրեալս, որպէս Ամերիկայի առաջ. վիճակին կանոնաւոր և սահմանադրականօրէն ընտրուած միակ պատգամաւոր, կը բողոքեմ ս. Էջմիածնի մէջ դեկտ. 10-ին (1911) գումարուած՝ պատգամաւորներու լիազօրութիւնը քննող համազգային ժողովի վճիռին դէմ, ինչպէս և ս. սինոդի այդ վճիռը հաստատելուն դէմ, և պատիւ ունիմ խնդրել այս իմ բողոքը կցել ընտրական նիստերու օրագրութեան հետ։

Մաղաք Գ. Պէրպէրեան

Էջմիածին, 13 դեկտ.

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԻ ԱՌԻԹՈՎ

«Зак.» թերթում (№ 281) տպագրված է հետևեալը.

«Зак.» թերթի դեկտ. 1 թւակիր համարում մենք կաթողիկոսական ընտրութեան ափիթով գրում ենք, ի միջի այլոց, հետևեալը. դժուար է գուշակել, թէ թեկնածու համարվող 8 բարձրատիճան հոգևորականներից ով աւելի ձայն կը վաստակի, ի նկատի ունենալով որ պայքարող երկու կողմերից իւրաքանչիւրի մէջ չը կայ համամտութիւն։

Համամտութեան բացակայութիւնը պայծառ կերպով երևան եկաւ ընտրութեան երրորդ և վճռական օրը. ընտրողների մեծամասնութիւնը մերժեցին և անդառնալիօրէն տապալեցին Սրմանեանին՝ ինքը մի օրից յետոյ պառակտեցաւ խմբերի՝ չորս թեկնածուներից մէկին առաջինը հռչակելու նկատմամբ, որը քառասուն ցանկի մէջ մտցուեց նոյն մեծամասնութեան կողմից։ Այժերի փոխ-յարաբերութիւնը խիստ կերպով փոխվեց, և դեռ ևս նոր կազմակերպված մեծամասնութեան մէջ առաջ եկաւ պայքար Սուրէնեանի և Դուրեանի կուսակիցների միջև։ Արդիւնքը՝ Սուրէնեանը ստացաւ 58 և Դուրեանը 57 սպիտակ քուէ։

Երկուսն էլ, կը նշանակէ, պիտի համարեա թէ հաւասար չափով ընտրված համարվեն, թէև Սուրէնեանը ստացել է 30, իսկ Դուրեանը 32 սև քուէ։ Սրանցից ոմն է վիճակված բարձրանալ կաթողիկոսական գահը։ Պատգամաւորների ժողովը կատարեց իր միսիան։ Նա ընտրութիւնները կատարեց համաձայն օրէնքի բոլոր թելադրանքների։ Նա վերջնականապէս դրեց երկու թեկնածուների, որոնց անունները Փոխարքայի միջոցով կը ներկայացվեն Թագաւոր Կայսրին՝ Բարձրագոյնս հաստատելու համար նրանցից մէկին։ Ո՞մը Թագաւոր Կայսրը կը հաստատէ, նա էլ կը լինի ամենայն հայոց կաթողիկոս։

Ընտրութիւնները էջմիածնում սկսվեցին բուռն, սակայն աւարտ գտան անկենդան կերպով։ Նրանց արդիւնքը իր անորոշութեամբ և երկդիմակութեամբ չէ կարող բաւարարել հասարակական կարծիքը։

***

«Тиф. Лист.» թերթի № 282-ում Ա. Քիշմիշեան հետևեալն է գրում.

Կատարվեց այն, ինչ որ ոչ ոք չէր կարող կանխատեսել և որը չէ մտցված պատմութեան էջերում ամենայն հայոց կաթողիկոսի և ծայրագոյն պատրիարքի ընտրութեան ժամանակ։ Հոգևորական և աշխարհական պատգամաւորների մի խումբ, զլխաւորապէս ռուսահայերից, չաւարտելով եկեղեցու պետի ընտրութիւնը՝ թողնում է համազգային ժողովը և, հրաժարվելով թեկնածուների քառանուն ցանկի կազմումին մասնակցելու, դուրս է գալիս էջմիածնի մայր տաճարից, ներկայացնելով պատճառաբանեալ բողոք։ Թէ որչափով այդ խումբը ուղիղ վարվեց, այդ ի հարկէ յայտնի կը լինի յետագայում։ Բայց ինքնին համազգային ժողովը թողնելու փաստը շատ անհաճոյ հետևանքներ կունենայ։ Նոյնիսկ այն պարագան, որ էջմիածնի պատրիարքական ընտրութիւնները կատարվեցին առանց ռուսահայերի մասնակցութեան, որոնք ամենից աւելի շահագրգռված են այս հարցում, որովհետև կաթողիկոսը ապրում և գործում է նրանց մէջ, ներկայանում է կարեւոր փաստ։ Եթէ այս ընտրութիւնները համազգային են, ապա ուրեմն ինչպէս նրանք պիտի կատարվեն առանց ռուսահայերի մասնակցութեան և, եթէ, չը նայած Ռուսաստանի չորս թեմերի՝ Թիֆլիսի, Շամախու, Շուշու և Բեսարաբիայի և մի քանի թիւրքահայ թեմերի, նմանապէս և հոգևորական անձանց հեռանալուն, այնուամենայնիւ կընտրվի մի այնպիսի հոգեւորական, ինչպիսի կը լինի դրութիւնը ռուսահայ այն թեմերի նկատմամբ, որոնց պատգամաւորները չը մասնակցեցին նրա ընտրութեանը։

Ինչպէս երևում է, վերոյիշեալ պատգամաւորների հեռանալը չը կանգնեցրեց համազգային ժողովի գործունեութիւնը, և նա շարունակեց գաղտնի քուէարկութիւնը չորս ընտրեալ թեկնածուների։ Այժմս էջմիածնից ստացված հեռագիրը հաղորդեց, որ համազգային ժողովին մնացած պատգամաւորների քուէն ընկել է Սուրէնեան և Դուրեան արքեպիսկոպոսներին, որոնք և կը ներկայացվեն Բարձրագոյն հայեցողութեան նրանցից մէկին հաստատելու ծայրագոյն պատրիարքի և ամենայն հայոց կաթողիկոսի պաշտօնի մէջ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գրոր.)

14 դեկտեմբերի

Պետերբուրգ. — Նացիոնալիստները Դումային առաջարկութիւն արին, որ Միացեալ-Պետութիւնների քաղաքացիներ համարվող հրէաները Ռուսաստան գալու իրաւունք չունեն անկախ նրանց դրութիւնից ու պարագմունքի տեսակից։ Ապա երեք կէտերի մէջ առաջարկված է աւելացնել ամերիկեան ապրանքների մաքսերը և մեծացնել ամերիկական դրօշակի տակ գտնվող նաւերի ապրանքներից առնվող պուդային տուրքերը։

—

Մոսկվա.—Քաղաքը Սօլդատէնկովի ժառանգներից ստացաւ 315,000 ր. Սօլդատէնկովի տուրն հիւանդանոցի պահպանութեան համար։

—

Բազել. — Նաւթարդիւնաբերողների համագումարը կովկասեան համալսարանին յատկացրեց 15,000 ր. պրոմիսլաներում ճանապարհներ կառուցանելու. 5,000 ր.՝ անբերրիութիւնից վնասվածների օգտին։

Համագումարը փակվեց։ Խորհրդի ներկայացուցիչ ընտրվեց Ղուկասեանը։

—

Բէլգրադ.—Պետք թագաւորի ծնողի դամբարանից գանգը յափշտակելու տեղեկութիւնը տեղական շրջաններում թողեց ծանր տպաւորութիւն և առանձնապէս ցնցեց Պետրոս թագաւորին։

—

Վիեննա.—Լրագիրները իշխան Ալէքսանդր Կարագեօրգեվիչի գանգի յափշտակութեան մէջ տեսնում են քաղաքական շարժառիթ։ Դերեզմանի մէջ գտնվող շքանշանները և մատանիները մնում են իրանց տեղում։

—

Պարիզ.—Պատգամաւորների պալատը ընդունեց ֆինանսական օրէնքի այն յօդուածը, որ վերաբերում է պետական եկամուտներին։ Եկամուտները հաշվված են 4.499.303,866, ծախքերը՝ 4.498.841,550։

—

Սալոնիկ.—Ֆուխլա գիւղի ճանապարհին սպանվեցին 6 մահմեդական։ Դիակները գտնված են։ Ցնցումը վերագրում են բուլգար հրոսակախմբին։

—

Մադրիդ.— Պաշտօնապէս հաղորդվում է Մէլիլիայից, որ դեկտ. 12-ին Ռիֆ շրջանի տեղացիները յարձակվեցին սպանացիների վրա, բայց յետ մղվեցին և նահանջեցին կերա գետի միւս կողմը։ Տեղացիները ունեցան խոշոր կորուստներ. սպանացիներից վիրաւորվեցին մի մայոր, երեք կապիտան և 36 զինուոր. սպանվեցին երկու զինուոր։

—

Լոնդոն.—«Դէյլի Էքսպրէսը» հաղորդում է, որ թագաւորական զոյգը մօտակայ ութ ամսում այցելելու է Եւրոպայի մայրաքաղաքները։

—

Յեռտա.—2000 մարդուց բաղկացած զօրամաս գեներալ Զուբիայի հրամանատարութեամբ մտաւ Մէլիլիա։

—

Բերլին.—Քաղաքային գիշերային ապաստարանում թունաւորված կերակուրից մեռան 21 հոգի։ Ընդամենը թունաւորվել են 46 մարդ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գրոր.)

14 դեկտեմբերի

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Կառավարական հաղորդագրութիւն։—Բնելով այն կացութիւնը, որ արդասիք եղաւ դեկտ. 8-ին Թաւրիզում, Բաշտում և Էնզէլիում ռուսաց զօրախմբերի և հասատութիւնների վրա գործ դրված մասսայական յանդուգն յարձակումների, և ուշադրութեան առնելով, որ այդ թշնամական գործողութիւնները, որոնց ժամանակ տեղի են ունեցել գազանային ոտնձգութիւններ և ծաղր ու ծաղնակներ սպանվածների և վիրաւորների վրա՝ պահանջում են ամենալուրջ վրիժառութիւն, և որ պարսից կառավարութիւնը, որ թէև մեղակից չէ այդ գործողութիւններին, չունի այնքան ոյժ, որպէսզի ընկճէ յանցաւորներին, —ռուսաց կառավարութիւնը հարկաւոր գտաւ անձամբ ձեռք առնել յիշեալ քաղաքներում պատժիչ միջոցներ իր հայեցողութեամբ։

Այդ նկատումով Թաւրիզի և Բաշտի ռուսաց հիւպատոսների գիտութեամբ զօրամասերի հրամանատարներին պատուիրագրված է անյապաղ ձեռք առնել խստագոյն միջոցներ՝ պատժելու վերոյիշեալ յարձակումների մէջ մեղաւոր անձանց և խափանելու ապագայում այն պատճառները, որոնք առաջ են բերում այդօրինակ երևոյթներ։ Իբրև այդպիսի միջոցներ մատնանշված են.—կալանաւորել ռուսաց զօրքերի վրա յարձակումներին մասնակցած բոլոր ռուսահպատակներին և պարսկահպատակներին, դատել նրանց պատերազմական ժամանակի օրէնքներով, զինաթափ անել ֆէդայիներին և մնացած տեղացի անհանգիստ տարրերին, քարուքանդ անել այն տեղերը, որտեղից ցոյց է տրվում ընդդիմադրութիւն, ինչպէս և այլ միջոցներ, որպիսիները ըստ կատարված յարձակումների յատկութեան կարող են անհրաժեշտ ճանաչվել՝ կարգ ու կանոնը վերահաստատելու ու յանցաւորներին պատժելու նպատակներով։

Այս կարգադրութիւնների մասին դեկտ. 10-ին տեղեկութիւն տրվեց Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքային համապատասխան հրահանգները տնօրինելու համար։

—

Թաւրիզ. — Գեներալ-Նահանգապետի տունը մտած ամբոխը սկսեց հայհոյանքների կոյտեր թափել և ծեծեց գեներալ-նահանգապետի պաշտօնական պրինց Սամանուլա-միրզային, պատառոտեց անջումանի վրա ծածանվող դրօշակները, նզովքի ենթարկեց դեմոկրատներին ու սահմանադրութեան։

Անջումանի անդամները ցրվեցին։ Սամանուլա-միրզան բաստ նստեց անգլիական հիւպատոսարանում։

Ֆէդայիների գլխաւոր ղեկավար յայտնի յեղափոխական Ամիր-Հիշմէթը փախաւ Ղարադաղի կողմը։ Բազմամարդ ամբոխը քարուքանդ անելով անջումանը դիմեց Բամինջ՝ խնդրելու Շուջա-ուդ-Իովլէին ստանձնել Ատրպատականի կառավարութիւնը։ Լուրերի համաձայն՝ նա համաձայնել է։

Թաւրիզի խճուղու հեռագրաթելը՝ երեք վերստ տարածութեամբ Թաւրիզից՝ բոլորովին փչացած է։

Հետևելով Ամիր-Հիշմէթի օրինակին ֆէդայիների և կովկասցիների ուրիշ առաջնորդներ, թւով մօտ 200, նոյնպէս փախան Ղարադաղ ու այլ կողմեր, որտեղից, լուրերի համաձայն, յոյս ունեն անցնել Ռուսաստան։

Ռուսական բանկում դրված է ռուսաց պահակախումբ։ Ֆէդայիները հեռացան միջնաբերդից։ Միջնաբերդի վրա ծածանվում է ռուսական դրօշակ։

Դեկտեմբերի 13-ին Աջիչայ եկած հրացանաձիգ գունդը թնդանօթներով կուռվ մտնում է Բաղչէմալ, ուր գտնվում է մեր զօրամասը։ Արևամտեան լսելի են ուժեղ թնդանօթաձգութիւն, գնդակացիրների ու հրացանների համազարկեր։

Զօրամասի և ռուսաց գեներալ-հիւպատոսարանի միջև հեռագիրը սկսեց գործել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՒՈՒՑԻԿ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ*)

I

Սիրում եմ աշնանը ճանապարհորդել։

Աշունն աւելի շատ նիւթ է տալիս խորհելու և ուրիշներին յայտնելու։ Գարունը և ամառը աշխատանքի շրջանն է, երբ գիւղացին քրտինք է թափում և աշնան յուսով ապրում։ Անորոշ է, երազական է գարունը, լրված սպասողութիւն է ամառը, քացորոշ է աշունը, երբ այսպէս կամ այնպէս իրագործված են երազները և ակնկալութիւնները։ Գիւղացին կանգնած չէ ոչխարների և հարցականների առաջ, աշխատաւորի դիմագծերը աղերսագին չեն կընճռոտվում և ողորմութիւն հայցում Ամենակարողից։ Հանգիստ է աշունը։ քիչ առաջ ցրի դաշտերը այժմ ծննդաբերական ցաւերն են վերջացնում և իրանց երկունքի արդիւնքով հրվում։ Մարգագետինները և անտառների կանաչները դալկանում են ու դեղնում, սարերը չորանում են, արտերը խոզանների ծածկվում։ Գարնան ու ամառվայ հրապուրիչ գեղեցկութիւնն է մեռնում. մահ է ընդունում անթառամելիօրէն. «Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան. նախ՝ կեանքը, ապա լացող մ'իր վրան»։ Ճանապարհորդը չէ կարող կեանք տալ մեռնող գեղեցկութեանը, վերականգնել կանաչ տերևների քաղցր սոսափիւնը. մնում է միայն, որ լացող լինի և մահամերձի գովքը յայտնէ ուրիշներին բարձրաձայն։

II

Երկրորդ անգամ վիճակվեց ինձ այցելել Պօղոսովի շրջանը։ Կարսի նահանգի ամենահեռաւոր անկիւնն է սա, Արդահանի գաւառի ամենախուլ վայրը։ Հաղորդակցութեան ճանապարհներից միանգամայն զուրկ այս շրջանը յարմար կը լինէր Թիֆլիսի նահանգին միացնել, որովհետև Պօղոսովի շրջանը Արդահանից բաժանված է ձիւնապատ բարձր լեռնաշղթայով. Պօղոսովի շրջանի ազգաբնակութիւնը տնտեսական ոչ մի կապ չունի Արդահանի շրջանի հետ. պօղոսովցիք իրանց շրջանի կենտրոն համարում են Ախալցխան, ուր և տանում են ծախելու իրանց արգասիքները՝ այգեկութի պտուղները, հացահատիկներ, գործուածքներ և այլն։ Ախալցխայից են բերում իրանց անհրաժեշտ իրերը։ Եւ այս շատ հասկանալի է. Պօղոսովը Ախալցխայից 10 վերստ է հեռու և կապված է նրա հետ սայլի մի քանի ճանապարհներով. իսկ Արդահանից՝ 45—50 վերստ է հեռու և լեռների միջով անցնող մի ճանապարհ ունի։ Այժմ այդ ճանապարհը աշխատում են դարձնել խճուղի, կառուցանում են կամուրջներ, հարթում են բլուրները և լցնում են փոսերը։ Բայց այդ չի մոտեցնի Պօղոսովը Արդահանին. առաջվայ պէս՝ Կարսից Պօղոսով գալու համար պէտք է գնալ Թիֆլիս, Բօրժոմ, Ախալցխա, որովհետև այսպէս աւելի քիչ է հեղութիւնը, քան կարսից Արդահան, Արդահանից էլ լեռների վրայով՝ Պօղոսով։ Բայց կառավարչական գաւառական կենտրոնները գտնվում են Արդահանում և ահագին դժուարութիւններ են ստեղծում։ Իրաւացի է Պետական Դումայի անդամ Յ. Սաղաթելեան, երբ Անդրկովկասի նահանգների անկանոն և անյարմար բաժանումն է մատնանշում։

III

Այս տարին անաջող էր այգեկործ պօղոսովցիների համար. այգիները լաւ արդիւնք չեն տուել. Դիղուր գիւղում նուազ արդիւնքներ են ստացված. Բաղելա, Վալէ և Մամաշ գիւղերը բաւարարից պակաս արգասիքներ են տուել. դրա համար և Ախալցխայում խնձորի և տանձի գինը շատ բարձրացել է. անցեալ տարիները լաւ խնձորի պուդը 1 ր. 80 կօպ. աւել չէ եղել, իսկ այս տարի 2 ր. 40 կ. է. «Թաւրիժուլի» տանձը՝ 1 ր. 60 կ., մինչդեռ անցեալ տարի 80 կ.-ից 1 ր. է եղել։ Հացահատիկները բերքը այս տարի միջակ է այս տեղ։ Գիւղացիք արդէն արել են աշնանացանը։

Կուզէի մի քանի խօսք ասել Պօղոսովի շրջանի միակ կանոնաւոր դպրոցի մասին. Պօղոսովում ապրում են զլխաւորապէս սիւնիի թուրքեր, որոնք իրանց համար ունեն մնդրէսէ, հոգևոր դպրոց. այդ մեդրէսէն գտնվում է Դիղուր գիւղում. նոյն գիւղում գտնվում է և պետական միգասական դպրոց։ Այս դպրոցը 13 տարի է, ինչ բացված է. պէտք էր սպասել, որ այժմ գիւղում կը լինէին առնուազը 100 դպրոցասարտներ, որոնք գոնէ ռուսերէն խօսել իմանային, բայց ռուսերէն խօսել իմացողների թիւը 30-ից չէ անցնում. պետական դպրոցում աշակերտների թիւը 30-ից չէ անցնում. մինչև այժմս այնտեղ ուսումը չէ սկսված, և երևի շատ ուշ կը սկսվի. դիղուրցին դժուարութեամբ է գնում պետական դպրոց, երբ կայ իրանց մեդրէսէն։ Իսկ շրջակայ գիւղերում չը կայ ոչ մէկը։ Լաւ կը լինէր, որ պետական դպրոցը փոխադրվեր Բաղելա գիւղը, որ Դիղուրից թէև քիչ փոքր է (508 հոգի), բայց ճանապարհի վրա է և ունի հարևան մօտիկ գիւղեր։ Եթէ Բաղելա տեղափոխվի Դիղուրի դպրոցը, այն ժամանակ աշակերտների թիւը կը մեծանայ, 2 ուսուցիչները չեն յոգնի անգործութիւնից և ներկայ խրտուիլակ դպրոցը կը դառնայ շէն և բազմամարդ։ Թէ չէ՝ 2 ուսուցչով դպրոց պահել 15 աշակերտի համար, որոնք միայն 3½ ամիս են դպրոց յաճախում, աննպատակայարմար մի գործ է, աւելորդ շռայլութիւն, մինչդեռ միւս գիւղերում այդպիսի դպրոցով կարելի էր աւելի խոշոր հետևանքներ ստանալ։

Կարսի շրջանի ժողովրդական դպրոցների տեսչութիւնը արդէն ուշադրութիւն է դարձրել այս խնդրի վրա, և պէտք է յուսալ, որ Դիղուրի դպրոցը կը դրվի աւելի նպաստաւոր մթնոլորտի մէջ։

IV

Պօղոսովից վերադառնալիս այցելեցի Սուրամ և Գօրի, ծանօթացայ այնտեղի հայերի կեանքին, և խորունկ վիշտ զգացի։ Օտարականը երբեք չէ կարող իմանալ, թէ այս տեղ հայերը են ապրում։ Այստեղի հայերը ոչնչով ցոյց չեն տալիս իրանց հայ լինելը. ամբողջապէս ձուլված են վրացիների հետ, բոլորովին մոռացել են իրանց մայրենի լեզուն և վրացերէնը միս և արիւն են դարձրել։ Նրանցից միայն մնացել է մի խրտուիլակ՝ նրանց «սամէխի» կոչվելը և դատարկ եկեղեցին. հայ քահանաներ կան թէ Սուրամում, թէ Գօրիում և թէ այլ հայախառն վրացական քաղաքներում, բայց նրանք միայն եկեղեցումն են հայերէն տառերով գրքեր տեսնում, միայն եկեղեցումն են հայերէն երգում ու խօսում, իսկ դուրսը, փողոցում, տանը... Ոչ։ Երբ Սուրամի, Գօրու կամ Մցխէթի փողոցներով քայլելիս ակամայ հայի հետ վրացերէն կամ ռուսերէն էի խօսում, սիրտս էր լալիս և ձայնս նուաղում ու հանգչում։ Խորունկ թախիծ, ազգային վիշտ էր ինձ մորմոքողը. ինչ կը լինեն այս հայերը յետոյ տարի, մի դար յետոյ. արդեօք ամբողջապէս չեն մոռանայ իրանց խաչակնքելու այժմեան կերպը։ Նրանք ազգայնութեան կորիզն են կործել, միջուկը ոչնչացրել և ողորմելի կեղևն են պահպանում։ Մեր լեզուն, Եղնիկի, Ալիշանի և Առարոնեանի փարթամ և բարեհունչ լեզուն ոճը օտար է նրանց. նրանք չեն ճաշակել հայկազեան բարբառի քաղցրութիւնը և նահատակում են իրանց հոգին վրայ աղքատ ոճերը ծամելով...

Որքան շատ են ազգային ցաւերը։ Մի տեղ հայ վանականութիւնն է ձեռքից ընկնում, ապականվում և ամէն մի կենտրոնակալ բան իրանից արտաքսում, նախապատ-

---

(* Տես «Մշակ» №№ 98 և 99.

Թէհրան.—Կազէրունի մօտերը զինված յարձակում կատարվեց անգլիական հիւպատոս Սմարտի վրա, որը հնդիկ ձիաւորների մեծ խմբով Բուշիրից գնում էր Շիրազ։ Պահակախմբին՝ կատաղի հրացանաձգութիւնից յետոյ՝ աջողվեց մահել Կազէրուն։ Հիւպատոսը կրաւ անհետ։ Դանվեց նրա վիրաւոր ձին։ Պահակախմբի կորուստները յայտնի չեն։

—

Զուլֆա.—Թաւրիզ մտաւ 8-րդ հրացանաձիգ գունդը։

—

Բազու.—Կալանաւորվեցին մօտ 90 կովկասեան ինգուշներ, որոնք գիմելու էին Պարսկաստան դէպքերին մասնակցելու համար։ Կալանաւորվածները աքսորվում են հայրենիք։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. զրծ.)

14 դեկտեմբերի

Տօկիօ.—Կայացաւ կաբինէտի գաղտնի խորհրդակցութիւն Օյամայի, Կացուրայի, Մացուհատայի և Եամագատայի մասնակցութեամբ չինական հարցի առիթով։ Լրագիրները ասում են, որ ի նկատի ունենալով Անգլիայի անվճռականութիւնը՝ եապօնական կառավարութիւնը ինքնուրոյն կերպով կը մշակէ գործողութիւնների ծրագիր՝ վերականգնելու կարգ ու կանոնը Զինաստանում անկախ նրանից—կը լինի արդեօք միապետութիւն կամ հանրապետութիւն։

—

Պեկին.—Ի պատասխանի Տանշաոյի հեռագրի, թէ ցանկալի է գումարել ազգ. ժողով պետական կազմի հարցի լուծման համար, Իւանշիկայը հեռագրեց, որ կառավարութիւնը համակրած է այդ մտքին, սակայն ժողով գումարելը կը պահանջէ մի քանի ամիս։ Իւանշիկայը խնդրում է Տանշաոյին քննել հարցը Վուդիֆանի հետ և մշակել ազգային ժողովի պատգամաւորների ընտրութեան եղանակը։

Սահմանադրական պալատը, վկայելով հայրենասիրական փոխառութեան անաջողութիւնը, խօսեց այն մտքով, թէ պէտք է փոխել փոխառութեան կանոնները, և անհրաժեշտ դատաւ, որպէսզի միխատրների խորհուրդը մատնանշէ կայսերական գերդատարանի իշխանութիւնները և նշանաւոր պալատականների ներկայացուցիչներին, թէ ցանկալի չէ նրանց մասնակցութիւնը փոխառութեան ստորագրութեան մէջ, որովհետև այդ անձանց քաղաքականութիւնը Զինաստանին հասցրեց յեղափոխութեան։ Այդ տեսակ վճռից յետոյ պալատի պատգամաւորները և կայսերական տան իշխանները հեռացան նիստի դահլիճից։

—

Կայֆինգիու.—Խէնան նահանգում տեղական իշխանութիւնները սաղմում ճնշեցին ապստամբութիւն առաջ բերելու փորձը։ Դաւադիրները գլխատվեցին։ Լուրերի համաձայն՝ իշխան Ցինը յայտնել է, թէ խաղաղ բանակցութիւնների անաջողութեան դէպքում իրան ամբողջապէս կը նուիրէ յեղափոխութեան դէմ կռուելուն։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 7/20 դեկտեմբեր

Արշաւունի սրբազանի ընտրութիւնը կառավարութեան կողմէ վաւերացաւ և հաւանական է, որ երկու օրէն նոր պատրիարքը իր օրինական երդումը կատարելով պաշտօնի ձեռնարկէ։

Արշաւունի սրբազան իր պատրիարքութեան համար ամենէն յարմար և ոչ թէ ամենէն դատարելը ու կարողը։

Մանաւանդ պէտք չէ միշտ աչքէ հեռացնել սա շատ նշանակելի պարագան, թէ Արշաւունի սրբազան՝ համեմատելով իրենց չընտրաղաւտ Դուրեան սրբազանին հետ՝ իրը պատրիարք անհամեմատ առաւելութիւններ ունի։

Արշաւունի սրբազան գոնէ ազգին ցաւերը մինիստրներու արտայայտելու եղանակը գիտէ, մինչ Դուրեան սրբազան պարզապէս ազէ արձան մըն է Բ. Դրան մէջ։

Գոնէ թուղթ մը մակագրելու եղանակը գիտէ, մինչ Դուրեան սրբազանի պաշտօնավարութեան մէջ առօրեայ սովորական դէպքերուն կարգէն էին Ուսումնական Խորհուրդին յանձնելի թուղթերուն Տնտեսական յղումը և այլ այս տեսակ զարհուրելի շփոթութիւններ, որոնք իր հաշակալ հմտութիւնը ծաղր ու ծանակ ընելու կը ծառայէին։

Իրը սերուն անեկդոտ մը կը պատմուի, թէ Օրմանեանի խտալցի անձնական բարեկամներէն մէկուն նամակը, որ սխալմամբ պատրիարքարան ձգուած էր, Դուրեան պատրիարք կը բանայ անուշադրութեամբ, նամակին գլուխը առ Օրմանեան սրբազան ուղղուած ըլլալը չի տեսներ դարձեալ անուշադրութեամբ, և անդրադառնալով, թէ նամակը իտալերէն է (որժէ ինքը բան մը չի հասկնար)... Դուրեան սրբազան խղճի ամենայն անդորրութեամբ կը մատկարէ «Խառն Ժողովի օրակարգ» անցնելու։

Բարեբաղդաբար, նամակին մինչև Խառն Ժողով հասնիլը՝ Արձանագրութեան Դիւանին մէջ կը գիտուի, թէ նամակը իտալերէն է և... Օրմանեան սրբազանի ուղղուած (11)։

Դարձեալ նշանաւոր են Դուրեանի ծոյլ նկարագիրը, անվճռականութիւնը և մանաւանդ թուլաբարոյ մեղկութիւնները, որոնցմէ օգտուելով կուզէին իրենց սանձարձակ գործունէութեան գործիք ընելու... այդ ծայրայեղ ձախակողմեան յախուռն տարրերը։

Եւ Դուրեան արքեպիսկոպոս նիւթական նկատումներով այնքան պզտիկցաւ ու խոնարհեցաւ, որ տեսակ մը հլու կամակատար դարձաւ կարգ մը մարդոց, որոնք զինքը մահացուցին բարոյապէս և այսօր տակաւին իրենց անխորհուրդ և անիմաստ վարուելակերպով՝ ապագան խորտակել կուզեն Դուրեանի։

Եթէ արդի ժամանակներու մէջ կայ մէկը, որ ամենայն իրաւամբ կրնայ ըսել՝ «Ով Աստուած, ազատէ զիս իմ բարեկամներէս, ես թշնամիներուս հետ գլուխ կրնամ ելնել»,—անիկա ալ Դուրեան սրբազանն է։

Իրը թէ բաւական եղած չըլլար անոր թաւալգլոր անկման պատճառ դառնալուն, հիմա ալ զայն կուզեն կասկածելի դարձնել որոշ շրջանակներու մէջ և հակադաշնակցական ոյժերու, յայտարարելով թէ անիկա է իրենց ընտրելին։

Եթէ վաղը՝ անոր ապագան խորտակուի, չենք գիտեր թէ ով պիտի ըլլայ պատասխանատու։ Անշուշտ՝ այս արդի ծառայութիւն մատուցանողները։

Եւ ըսել, թէ իրենց պաշտած մէկ անձին իսկ շահերը պաշտպանելու և խորհելու անկարող անձեր... ազգին շահերը պիտի մտածեն։

Ափսոս այն ազգին, որ ասանկ անուղղաառաջնորդներ ունի։

Շառայլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՑՆԱԿԱՆ ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆ

II*)

Մամուլը, որի կոչումը այնքան բարձր է, որի նպատակը և խնդիրները այնքան վեհ և բազմակողմանի, մեզանում ընկել է իր այդ նուիրական ամբիօնից և շաղախվել այլասերված կեանքի կեղտոտ սովորութիւնների մէջ։

Նա չունի ոյժ, հեղինակութիւն, չունի և առաքինութիւն, որովհետև նա գաղափարական չէ, այլ կեղծող, ստորաքաշ և թայֆայական։ Նա չունի որևէ հաւատ, ուստի երկրպագում է ամեն ինչի և ամենից առաջ փողին և անհատի դիրքին։ Նա ժողովրդին քարոզում է ոչ արծուի պէս բարձրաբերձ լեռան գագաթից, այլ վախկոտ գորտի պէս սոսկ կռկռում է բորբոսնած ճահիճների խորքերից։

Գալով մեր ինտելիգենցիային՝ պէտք է ասել, որ նա չունի ազգային ոչ հոտ, ոչ համ։ Լոկ իր անձնական հաճոյքների և կամքերի ետևից ընկած, այդ մասան՝ ընդհանուր առմամբ՝ չունի ազգային-հասարակական մի մեծ արժէք ներկայ ժամանակ։ Մի քանի անհատների շահաւէտ գործունէութիւնը, ի հարկէ, չէ կարող մխիթարանք լինել ամենքի դիմաց։ Եթէ ենթադրենք, թէ ունենք 100 ինտելիգենտ հայ, ապա դրանցից մէկը կամ երկուսը գուցէ պիտանի գտնվի ազգի շահերի և ցաւերի համար։ Սրան ապացոյց են այն բազմաթիւ ցաւալի երեոյթները, որոնք տեղի են ունենում մեր առօրեայ կեանքի մէջ և արձանագրվում մամուլի էջերում, ինչպէս օրինակ՝ ուսումնարանների անապահով վիճակը, լաւագոյն հայ զրողների և ուսուցիչների տնտեսական ծանր դրութիւնը, սովամահ մասայի հաւատուրացումը և գաղթը բուն երկրից օտար աշխարհներ և սրա հետ միասին այդ սովեալների համար հազար ու մի նեղութիւնով հանգանակված գումարների ապօրինի մըսխելը «ազգային խայծկերների» (ուրիշների բաժինը ուտող) ձեռքով, եթէ չասենք վատնումը։ Քանի-քանի նման օրինակներ կարելի է բերել ապացուցելու, որ մեր այժմեան ինտելիգենցիան անտարբեր և սառն է դէպի հարազատ իր ժողովրդի կարիքները։

Մտաւոր և հարուստ կենտրոններում հաստատված հայ ինտելիգենցիան մի տեղ մոռացել է իսպառ իր ազգութիւնը և ձուլվել օտարների հետ, մէ այլ տեղ էլ նա՝ նոյնպէս անտարբեր դէպի մեր հասարակական-ազգային հարցերը՝ հանգիստ և ապահով ապրում է իր համար և միայն երբեմն այս ու այն ձեով խրախուսում մի որևէ երեոյթ մեր կեանքում։

Նոյնը պէտք է ասել յիշածս տեղերի հայ վաճառականների մասին, որոնք տասնեակ տարիներ սրանից առաջ գաղթած լինելով այդ կենտրոնները՝ թէև, այո, լաւ հարստացել են, բայց այնու ամենայնիւ՝ նրանց մտքի թափը, նրանց հոգու աշխարհը առաջվայ պէս մնացել է նոյն շրջանակի մէջ նեղ և խաւար։ Նրանց՝ շնորհքով կահաւորված տներում չի գտնվի հայերէն մի գիրք, մի հրատարակութիւն, իսկ կողմնակի որևէ օգնութեան մասին այս կամ այն հասարակական հիմնարկութեանը՝ հարց անգամ չէ կարող լինել։

Օտարութեան մէջ բարձրագոյն ուսում ձեռք բերող երկսեռ հայ ուսանողութիւնը աւելի քան ապերախտ է դէպի իր ազգը, որն այնքան մեծ յոյսեր, մխիթարանք և պարծանք է գտնում նրա մէջ։ Առաջներում հայ ուսանողութիւնը մեր կեանքի մարգարէն է եղել։ Նա նրա համար է այդքան թանգ եղել, որովհետև ունեցել է ազգային-հասարակական բարձր գաղափարներ, ունեցել է մաքուր իղձեր և փափագներ ու ջանք թափելիս է եղել այդ ամենը իրագործելու մեր դառն կեանքը համեմելու համար։ Այդ ժամանակ «ուսանող» բառը եղել է մի նուիրական միտք, մի խոր հասկացողութիւն։

Ներկայ ժամանակ այդ թանգագին քարը, այդ նուիրական խօսքը կորցրել է իր արժէքը, որովհետև նա, այսպէս ասած, դալարցել է։

Ազգ, հասարակական գործ, գաղափար, իդէաներ - դրանք ինչ աւելորդ և նոյնիսկ յիմար հարցեր են այժմեան մեր այլասերված և բարոյապէս ջախջախված ուսանողութեան տեսակէտով։

Դրանց վերաբերեալ այժմ նա ունի իր սոսկ կեանքը կարգաւորելու համար ձեռք առած այնպիսի միջոցներ, որոնցից ոչ մէկը չէ համապատասխանում նրա ոչ կոչմանը, ոչ անունին։ Եթէ առաջներում ուսանողութեան մէջ առանձին-առանձին անհատներն են եղել փչացած և բարոյապէս ընկած, ներկայ ուսանողութեան մէջ նկատվում է հակառակը, այն է՝ որ նա ամբողջովին վարկաբեկված է և չունի պատիւ ու յարգանք, բացառութեամբ մի քանիսների։ Գալով մեր գիւղացութեանը և հայ բանւոր դասակարգին, պէտք է ասել, որ նա լիովին հիւծվում է չքաւորութեան և տառապանքի մէջ։ Սովը, հիւանդութիւնը, տգիտութիւնը այդ դասակարգի դառն բաժինն են։ Նա անօգնական է և մենակ։ Նա չունի ազնիւ և պիտանի ընկեր իր կեանքի փոտ ճանապարհին։

Մարդկային կեանքի մէջ գիւղացութիւնն ու բանւորութիւնը ամենամոռացված, շահագործված և վշտացած տարրն է։ Ամենից շատ նրան են նեղացնում, ամենից շատ նրան վիրաւորում։ Իսկ նա լուռ ու մունջ, վիզը ճկած՝ հպատակվում է անբարեխիղճ և զինված մարդկանց այնպէս, ինչպէս իր բրիկ և քաղցած լծկանը՝ խրան։ Նա ճորտ է եղել և ճորտ է այժմ։

Այս ամենը մենք ամեն օր տեսնում ենք և կարդում այդ մասին, բայց չենք զգում մեր եղբայրների այդ համար մեծ տանջանքը, որովհետև մեր խիղճը քարացել է և մեր զգացմունքները ժանգոտել են։

Իսկ ինչ է ներկայացնում մեր կեանքի մէջ հայ հոգևոր դասը։ Կանգնած է նա, ինչպէս ասում են, Աստուծոյ և ժողովրդի մէջ՝ որպէս միջնորդ։ Նա կատարում է իր վրա առած մեծ մխսիան։ Վերջապէս որ մէկը մեզանից կարող կը լինի մխիթարվել ֆարաջայի մէջ ծածկված այդ սովորական քաղաքացիների գէթ մի չնչին, մի հասարակ ազգաշէն գործով։

Ո՛չ, և զուցէ բնաւ երբէք։

Այդ ամենը եղել է միայն անցեալում և սրբազործվել մեզանից իւրաքանչիւրի յիշողութեան մէջ։

Այժմ նրանք, այդ «երկնային զաւակները», զզվել են իրանց միսայից, խորամանկացել և ժամանակի դէշ թելադրութեան տակ այլանդակվել և լուծվել խարդախութեան, նոյնիսկ անբարոյականութեան մէջ։

Առօրեայ նրանց կեանքը, նիստն ու կացը, ամեն մի նրանց քայլը հակասում է այն կոչմանը, որին նրանք իրրև թէ հաւատարիմ պէտք է մնային։

Ահա այս է մեր ազգի աննախանձելի արդի վիճակը, որը մի սև կօշմար է, մի հոգեմաշ թախիծ։

Բայց ի՞նչպէս ցրել այդ թանձր կօշմարը, որի մէջ ահա քանի ժամանակ խեղդվում է հայ ազգը։

Վահան Մամիկոնեան

Մոսկվա

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՅ ԹԱՏՐՕՆԻ ՄԱՍԻՆ

—

Հայ թատրոնն ունի մի քանի հիւանդոտ կողմեր, որոնք արժանի են լուրջ ուշադրութեան։

Այդ պակասութիւնների մասին շատերն են գրել ու ճառել, բայց դժբաղդաբար դրանով խնդիրը մաղաչափ անգամ չէ փոխվել, իսկ թատրոնը մի կերպ քարշ է տուել իր հիւանդոտ գոյութիւնը։

Թատրոնի մասին խօսելիս, բոլորն էլ միաբերան կրկնում են, որ նրա հիւանդոտ դրութեան պատճառը հանդիսանում է նրա նիւթական անապահովութիւնը։

Իսկ նիւթական անապահովութեան գլխաւոր պատճառը նա է, որ հասարակութիւնը չէ յաճախում և հայ մեցենասները չեն բացում իրանց քսակները թատրոնի օգտին, ինչպէս այդ տեսնում ենք ռուս և օտարազգի թատրոնների վերաբերմամբ։

Եւ իրաւ, մինչին հայը իր բաւականութիւնները ստանալով մեչչանական ընտանիքում՝ թատրոնը մի անհրաժեշտ գործոն չէ համարում և նրա վրա նայում է ոչ իբրև անհրաժեշտութեան, այլ շռայլութեան վրա։

Իսկ հայ ինտելիգենտը իր էստիկական ճաշակը զարգացնելով ռուս-եւրոպական բեմերի վրա՝ գոհացում չէ ստանում հայ բեմից։

Հայ ինտելիգենտը կարող է յաճախել հայ թատրոնը զուտ ազգայնական, հայրենասիրական դրդումներով և դրա մէջ որոշ գոհողութիւններ դնել, սակայն այդ զգացմունքը դնալով իր սնանկութիւնն է ցուցադրում։

Հայ ինտելիգենտի և դրա հետ հայ ժողովրդի խորշումը թատրոնից չափազանց բնական պիտի համարել այն տեսակէտից, որ գնալով ժողովուրդը լայնացնում, բարդացնում է իր կուլտուրական պահանջները, իսկ այդ պահանջների նկատմամբ թատրոնը՝ որպէս կուլտուրական գործոն՝ յետ է մնում, չէ համապատասխանում այդ պահանջներին։

Թատրոնի և ժողովրդի միջև ստեղծված տարաձայնութեան լայնացումը մենակ նիւթական անապահովութեան մէջ չէ կայանում, ինչպէս շատերն են ասում, այլ և նրանում, որ մենք դերասանական խումբ չունենք։ Մենք ունենք հատ ու կտոր դերասաններ, բայց դերասանական խումբ՝ բնաւ։

Մեր դերասաններից շատերին չէ կարելի դերասան անուանել։ Նրանց մեծամասնութիւնը լոկ սիրողներ են, և այդ՝ ոչ միայն երբ նոր միայն բեմ են ելնում, այլ և իրանց խաղի ամբողջ շրջանում սիրողներ են մնում։

Բեմ դուրս գալը մեզանում պայմանաւորվում է ոչ թէ որոշ ձիրքով, շնորհքով, այլ այնպէս, որպէս սովորութիւն, յաճախ՝ մօդա։

Տեղից վեր կենողը այժմ դերասան է դառնում. և կօշկակարը, և սափրիչը, և պաղպաղ ուսուցիչը, և ամեն ոք։

Որոշ պատրաստականութեան, բեմական ընդունակութիւնների, գեղարուեստական ճաշակի մասին խօսք լինել չէ կարող։

Դերասանական ընդունակութիւնների, դերասանից պահանջվող պատասխանատուութիւնների մասին այդ տիպի հայ դերասանն ունի չափազանց թիւր կարծիք, վայր ի վերոյ գաղափար։

*) Տես «Մշակ» № 276.

Թէհրան.—Կազէրունի մօտերը զինված յարձակում կատարվեց անգլիական հիւպատոս Սմարտի վրա, որը հնդիկ ձիաւորների մեծ խմբով Բուշիրից գնում էր Շիրազ։ Պահակախմբին՝ կատաղի հրացանաձգութիւնից յետոյ՝ աջողվեց մահել Կազէրուն։ Հիւպատոսը կրաւ անհետ։ Դանվեց նրա վիրաւոր ձին։ Պահակախմբի կորուստները յայտնի չեն։

—

Զուլֆա.—Թաւրիզ մտաւ 8-րդ հրացանաձիգ գունդը։

—

Բազու.—Կալանաւորվեցին մօտ 90 կովկասեան ինգուշներ, որոնք գիմելու էին Պարսկաստան դէպքերին մասնակցելու համար։ Կալանաւորվածները աքսորվում են հայրենիք։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. զրծ.)

14 դեկտեմբերի

Տօկիօ.—Կայացաւ կաբինէտի գաղտնի խորհրդակցութիւն Օյամայի, Կացուրայի, Մացուհատայի և Եամագատայի մասնակցութեամբ չինական հարցի առիթով։ Լրագիրները ասում են, որ ի նկատի ունենալով Անգլիայի անվճռականութիւնը՝ եապօնական կառավարութիւնը ինքնուրոյն կերպով կը մշակէ գործողութիւնների ծրագիր՝ վերականգնելու կարգ ու կանոնը Զինաստանում անկախ նրանից—կը լինի արդեօք միապետութիւն կամ հանրապետութիւն։

—

Պեկին.—Ի պատասխանի Տանշաոյի հեռագրի, թէ ցանկալի է գումարել ազգ. ժողով պետական կազմի հարցի լուծման համար, Իւանշիկայը հեռագրեց, որ կառավարութիւնը համակրած է այդ մտքին, սակայն ժողով գումարելը կը պահանջէ մի քանի ամիս։ Իւանշիկայը խնդրում է Տանշաոյին քննել հարցը Վուդիֆանի հետ և մշակել ազգային ժողովի պատգամաւորների ընտրութեան եղանակը։

Սահմանադրական պալատը, վկայելով հայրենասիրական փոխառութեան անաջողութիւնը, խօսեց այն մտքով, թէ պէտք է փոխել փոխառութեան կանոնները, և անհրաժեշտ դատաւ, որպէսզի միխատրների խորհուրդը մատնանշէ կայսերական գերդատարանի իշխանութիւնները և նշանաւոր պալատականների ներկայացուցիչներին, թէ ցանկալի չէ նրանց մասնակցութիւնը փոխառութեան ստորագրութեան մէջ, որովհետև այդ անձանց քաղաքականութիւնը Զինաստանին հասցրեց յեղափոխութեան։ Այդ տեսակ վճռից յետոյ պալատի պատգամաւորները և կայսերական տան իշխանները հեռացան նիստի դահլիճից։

—

Կայֆինգիու.—Խէնան նահանգում տեղական իշխանութիւնները սաղմում ճնշեցին ապստամբութիւն առաջ բերելու փորձը։ Դաւադիրները գլխատվեցին։ Լուրերի համաձայն՝ իշխան Ցինը յայտնել է, թէ խաղաղ բանակցութիւնների անաջողութեան դէպքում իրան ամբողջապէս կը նուիրէ յեղափոխութեան դէմ կռուելուն։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 7/20 դեկտեմբեր

Արշաւունի սրբազանի ընտրութիւնը կառավարութեան կողմէ վաւերացաւ և հաւանական է, որ երկու օրէն նոր պատրիարքը իր օրինական երդումը կատարելով պաշտօնի ձեռնարկէ։

Արշաւունի սրբազան իր պատրիարքութեան համար ամենէն յարմար և ոչ թէ ամենէն դատարելը ու կարողը։

Մանաւանդ պէտք չէ միշտ աչքէ հեռացնել սա շատ նշանակելի պարագան, թէ Արշաւունի սրբազան՝ համեմատելով իրենց չընտրաղաւտ Դուրեան սրբազանին հետ՝ իրը պատրիարք անհամեմատ առաւելութիւններ ունի։

Արշաւունի սրբազան գոնէ ազգին ցաւերը մինիստրներու արտայայտելու եղանակը գիտէ, մինչ Դուրեան սրբազան պարզապէս ազէ արձան մըն է Բ. Դրան մէջ։

Գոնէ թուղթ մը մակագրելու եղանակը գիտէ, մինչ Դուրեան սրբազանի պաշտօնավարութեան մէջ առօրեայ սովորական դէպքերուն կարգէն էին Ուսումնական Խորհուրդին յանձնելի թուղթերուն Տնտեսական յղումը և այլ այս տեսակ զարհուրելի շփոթութիւններ, որոնք իր հաշակալ հմտութիւնը ծաղր ու ծանակ ընելու կը ծառայէին։

Իրը սերուն անեկդոտ մը կը պատմուի, թէ Օրմանեանի խտալցի անձնական բարեկամներէն մէկուն նամակը, որ սխալմամբ պատրիարքարան ձգուած էր, Դուրեան պատրիարք կը բանայ անուշադրութեամբ, նամակին գլուխը առ Օրմանեան սրբազան ուղղուած ըլլալը չի տեսներ դարձեալ անուշադրութեամբ, և անդրադառնալով, թէ նամակը իտալերէն է (որժէ ինքը բան մը չի հասկնար)... Դուրեան սրբազան խղճի ամենայն անդորրութեամբ կը մատկարէ «Խառն Ժողովի օրակարգ» անցնելու։

Բարեբաղդաբար, նամակին մինչև Խառն Ժողով հասնիլը՝ Արձանագրութեան Դիւանին մէջ կը գիտուի, թէ նամակը իտալերէն է և... Օրմանեան սրբազանի ուղղուած (11)։

Դարձեալ նշանաւոր են Դուրեանի ծոյլ նկարագիրը, անվճռականութիւնը և մանաւանդ թուլաբարոյ մեղկութիւնները, որոնցմէ օգտուելով կուզէին իրենց սանձարձակ գործունէութեան գործիք ընելու... այդ ծայրայեղ ձախակողմեան յախուռն տարրերը։

Եւ Դուրեան արքեպիսկոպոս նիւթական նկատումներով այնքան պզտիկցաւ ու խոնարհեցաւ, որ տեսակ մը հլու կամակատար դարձաւ կարգ մը մարդոց, որոնք զինքը մահացուցին բարոյապէս և այսօր տակաւին իրենց անխորհուրդ և անիմաստ վարուելակերպով՝ ապագան խորտակել կուզեն Դուրեանի։

Եթէ արդի ժամանակներու մէջ կայ մէկը, որ ամենայն իրաւամբ կրնայ ըսել՝ «Ով Աստուած, ազատէ զիս իմ բարեկամներէս, ես թշնամիներուս հետ գլուխ կրնամ ելնել»,—անիկա ալ Դուրեան սրբազանն է։

Իրը թէ բաւական եղած չըլլար անոր թաւալգլոր անկման պատճառ դառնալուն, հիմա ալ զայն կուզեն կասկածելի դարձնել որոշ շրջանակներու մէջ և հակադաշնակցական ոյժերու, յայտարարելով թէ անիկա է իրենց ընտրելին։

Եթէ վաղը՝ անոր ապագան խորտակուի, չենք գիտեր թէ ով պիտի ըլլայ պատասխանատու։ Անշուշտ՝ այս արդի ծառայութիւն մատուցանողները։

Եւ ըսել, թէ իրենց պաշտած մէկ անձին իսկ շահերը պաշտպանելու և խորհելու անկարող անձեր... ազգին շահերը պիտի մտածեն։

Ափսոս այն ազգին, որ ասանկ անուղղաառաջնորդներ ունի։

Շառայլ

Շուրջս եմ նայում. կիսանեղկ յատակը արդէն ծածկված է ջրով, և լուսամուտս ապակիները ճռնչում են մի երգ՝ դուրսը մնացած բոլոր խեղճերի մասին, ու ես յիշում եմ եղբօրս, որ իրը թէ այս անձրևոտ գիշերին երևի սոված մի տեղ կծկված կը լինի ծածկոց չունենալուն համար, ու ինձ էլ նորից հանգատացնում, թէ քոյրս կուզարկի նրան մի բարձ, իսկ մայրս կօրօրի մի երգով, որ այնպէս ներկայացնում է անդուլ աշխատանքը ցորենի արտերի մօտ։ Նստում եմ վերատին. սիրտս հանկարծ չէ.լալ եմ ուզում։ Հեռու ծովի վրայից քամին բերում է մի ձայն, և ես այդ նմանեցնում եմ ընկերներս կանչին, ուշ գիշերին, լուսնի լուսով, կուրտների վրայից։ Շները չորս կողմից արձագանք են տալիս, և մօտիկ լսում եմ մօրս ձայնը, որ այնպէս նման էր ազբիւրի զնգոցին.

— Զաւակս, այդ դուն ես...

Անձրևը յորդանում է ու թափվում։ Վեր եմ կենում։ Այդ ով է, որ բաւականութիւն չէ գտնում կեանքից և անձնասպանութեան է դիմում. ահա կեանքը իր ամբողջ էութեամբ, իր հարմանիայով և իր գեղեցկութեամբ. մի՞թէ սա վայելք չէ... Դուռս նորից է ճանչում, մօտ եմ գնում։

— Ո՞վ է։

Պատասխան չը կայ։

— Եըջանկութիւն, իմ վաղ բարեկամ, այդ դու կը լինես, այդ դու կը լինես...

Ա. Զանեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՑՆԱԿԱՆ ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆ

II*)

Մամուլը, որի կոչումը այնքան բարձր է, որի նպատակը և խնդիրները այնքան վեհ և բազմակողմանի, մեզանում ընկել է իր այդ նուիրական ամբիօնից և շաղախվել այլասերված կեանքի կեղտոտ սովորութիւնների մէջ։

Նա չունի ոյժ, հեղինակութիւն, չունի և առաքինութիւն, որովհետև նա գաղափարական չէ, այլ կեղծող, ստորաքաշ և թայֆայական։ Նա չունի որևէ հաւատ, ուստի երկրպագում է ամեն ինչի և ամենից առաջ փողին և անհատի դիրքին։ Նա ժողովրդին քարոզում է ոչ արծուի պէս բարձրաբերձ լեռան գագաթից, այլ վախկոտ գորտի պէս սոսկ կռկռում է բորբոսնած ճահիճների խորքերից։

Գալով մեր ինտելիգենցիային՝ պէտք է ասել, որ նա չունի ազգային ոչ հոտ, ոչ համ։ Լոկ իր անձնական հաճոյքների և կամքերի ետևից ընկած, այդ մասան՝ ընդհանուր առմամբ՝ չունի ազգային-հասարակական մի մեծ արժէք ներկայ ժամանակ։ Մի քանի անհատների շահաւէտ գործունէութիւնը, ի հարկէ, չէ կարող մխիթարանք լինել ամենքի դիմաց։ Եթէ ենթադրենք, թէ ունենք 100 ինտելիգենտ հայ, ապա դրանցից մէկը կամ երկուսը գուցէ պիտանի գտնվի ազգի շահերի և ցաւերի համար։ Սրան ապացոյց են այն բազմաթիւ ցաւալի երեոյթները, որոնք տեղի են ունենում մեր առօրեայ կեանքի մէջ և արձանագրվում մամուլի էջերում, ինչպէս օրինակ՝ ուսումնարանների անապահով վիճակը, լաւագոյն հայ զրողների և ուսուցիչների տնտեսական ծանր դրութիւնը, սովամահ մասայի հաւատուրացումը և գաղթը բուն երկրից օտար աշխարհներ և սրա հետ միասին այդ սովեալների համար հազար ու մի նեղութիւնով հանգանակված գումարների ապօրինի մըսխելը «ազգային խայծկերների» (ուրիշների բաժինը ուտող) ձեռքով, եթէ չասենք վատնումը։ Քանի-քանի նման օրինակներ կարելի է բերել ապացուցելու, որ մեր այժմեան ինտելիգենցիան անտարբեր և սառն է դէպի հարազատ իր ժողովրդի կարիքները։

Մտաւոր և հարուստ կենտրոններում հաստատված հայ ինտելիգենցիան մի տեղ մոռացել է իսպառ իր ազգութիւնը և ձուլվել օտարների հետ, մէ այլ տեղ էլ նա՝ նոյնպէս անտարբեր դէպի մեր հասարակական-ազգային հարցերը՝ հանգիստ և ապահով ապրում է իր համար և միայն երբեմն այս ու այն ձեով խրախուսում մի որևէ երեոյթ մեր կեանքում։

Նոյնը պէտք է ասել յիշածս տեղերի հայ վաճառականների մասին, որոնք տասնեակ տարիներ սրանից առաջ գաղթած լինելով այդ կենտրոնները՝ թէև, այո, լաւ հարստացել են, բայց այնու ամենայնիւ՝ նրանց մտքի թափը, նրանց հոգու աշխարհը առաջվայ պէս մնացել է նոյն շրջանակի մէջ նեղ և խաւար։ Նրանց՝ շնորհքով կահաւորված տներում չի գտնվի հայերէն մի գիրք, մի հրատարակութիւն, իսկ կողմնակի որևէ օգնութեան մասին այս կամ այն հասարակական հիմնարկութեանը՝ հարց անգամ չէ կարող լինել։

Օտարութեան մէջ բարձրագոյն ուսում ձեռք բերող երկսեռ հայ ուսանողութիւնը աւելի քան ապերախտ է դէպի իր ազգը, որն այնքան մեծ յոյսեր, մխիթարանք և պարծանք է գտնում նրա մէջ։ Առաջներում հայ ուսանողութիւնը մեր կեանքի մարգարէն է եղել։ Նա նրա համար է այդքան թանգ եղել, որովհետև ունեցել է ազգային-հասարակական բարձր գաղափարներ, ունեցել է մաքուր իղձեր և փափագներ ու ջանք թափելիս է եղել այդ ամենը իրագործելու մեր դառն կեանքը համեմելու համար։ Այդ ժամանակ «ուսանող» բառը եղել է մի նուիրական միտք, մի խոր հասկացողութիւն։

Ներկայ ժամանակ այդ թանգագին քարը, այդ նուիրական խօսքը կորցրել է իր արժէքը, որովհետև նա, այսպէս ասած, դալարցել է։

Ազգ, հասարակական գործ, գաղափար, իդէաներ - դրանք ինչ աւելորդ և նոյնիսկ յիմար հարցեր են այժմեան մեր այլասերված և բարոյապէս ջախջախված ուսանողութեան տեսակէտով։

Դրանց վերաբերեալ այժմ նա ունի իր սոսկ կեանքը կարգաւորելու համար ձեռք առած այնպիսի միջոցներ, որոնցից ոչ մէկը չէ համապատասխանում նրա ոչ կոչմանը, ոչ անունին։ Եթէ առաջներում ուսանողութեան մէջ առանձին-առանձին անհատներն են եղել փչացած և բարոյապէս ընկած, ներկայ ուսանողութեան մէջ նկատվում է հակառակը, այն է՝ որ նա ամբողջովին վարկաբեկված է և չունի պատիւ ու յարգանք, բացառութեամբ մի քանիսների։ Գալով մեր գիւղացութեանը և հայ բանւոր դասակարգին, պէտք է ասել, որ նա լիովին հիւծվում է չքաւորութեան և տառապանքի մէջ։ Սովը, հիւանդութիւնը, տգիտութիւնը այդ դասակարգի դառն բաժինն են։ Նա անօգնական է և մենակ։ Նա չունի ազնիւ և պիտանի ընկեր իր կեանքի փոտ ճանապարհին։

Մարդկային կեանքի մէջ գիւղացութիւնն ու բանւորութիւնը ամենամոռացված, շահագործված և վշտացած տարրն է։ Ամենից շատ նրան են նեղացնում, ամենից շատ նրան վիրաւորում։ Իսկ նա լուռ ու մունջ, վիզը ճկած՝ հպատակվում է անբարեխիղճ և զինված մարդկանց այնպէս, ինչպէս իր բրիկ և քաղցած լծկանը՝ խրան։ Նա ճորտ է եղել և ճորտ է այժմ։

Այս ամենը մենք ամեն օր տեսնում ենք և կարդում այդ մասին, բայց չենք զգում մեր եղբայրների այդ համար մեծ տանջանքը, որովհետև մեր խիղճը քարացել է և մեր զգացմունքները ժանգոտել են։

Իսկ ինչ է ներկայացնում մեր կեանքի մէջ հայ հոգևոր դասը։ Կանգնած է նա, ինչպէս ասում են, Աստուծոյ և ժողովրդի մէջ՝ որպէս միջնորդ։ Նա կատարում է իր վրա առած մեծ մխսիան։ Վերջապէս որ մէկը մեզանից կարող կը լինի մխիթարվել ֆարաջայի մէջ ծածկված այդ սովորական քաղաքացիների գէթ մի չնչին, մի հասարակ ազգաշէն գործով։

Ո՛չ, և զուցէ բնաւ երբէք։

Այդ ամենը եղել է միայն անցեալում և սրբազործվել մեզանից իւրաքանչիւրի յիշողութեան մէջ։

Այժմ նրանք, այդ «երկնային զաւակները», զզվել են իրանց միսայից, խորամանկացել և ժամանակի դէշ թելադրութեան տակ այլանդակվել և լուծվել խարդախութեան, նոյնիսկ անբարոյականութեան մէջ։

Առօրեայ նրանց կեանքը, նիստն ու կացը, ամեն մի նրանց քայլը հակասում է այն կոչմանը, որին նրանք իրրև թէ հաւատարիմ պէտք է մնային։

Ահա այս է մեր ազգի աննախանձելի արդի վիճակը, որը մի սև կօշմար է, մի հոգեմաշ թախիծ։

Բայց ի՞նչպէս ցրել այդ թանձր կօշմարը, որի մէջ ահա քանի ժամանակ

Նա իրան բարձր է դասում և դպրոցից, և ճաշակից, և տեխնիկայից. նա չափազանց մեծամիտ է, և այդ մեծամտութեան արտայայտությունները թաղված են նրա տգիտութեան մէջ։

Դերասանը իր խաղով պիտի զոհացում տայ հետևեալ երեք պահանջներին, որոնք ձևակերպել են Սէրգէյ Գլազովն և ուրիշ գեղարուեստագէտներ։

Առաջին՝ դերասանը պիտի լինի գեղարուեստագէտ։ Այդ անհրաժեշտ է հէնց այն հասարակ պատճառով, որ նա գործ ունի գեղեցկի հետ։ Նա մինչև բեմ դուրս գալը պիտի ըմբռնէ իր խաղալիք դերի հոգեբանական սիստեմացիան, այսինքն նա պիտի իր երևակայութեան մէջ պատկերացնի խաղալիք դերը իր ամբողջ մեծութեամբ, իբրայատուկ հոգեբանական արտայայտութեամբ, վերլուծման ենթարկէ նրա իւրաքանչիւր արտայայտութիւնը։ Այս դէպքում գեղարուեստագէտ դերասանը հանդիսանում է դրամատուրգի մտքի, ցանկութիւնների և զգացմունքների մեկնաբանողը։

Այդ պահանջին բաւարարութիւն տալու համար՝ դերասանը պիտի ունենայ լայն զարգացում և գեղագիտական ճաշակ։

Երկրորդ՝ դերասանը պէտք է լինի դերասան։ Այսինքն նա պիտի կարողանայ, ինչպէս ականաւոր դերասան Պոսարդն է ասում, «կանգնել, շարժվել և դուրս գալ բեմից»։

Որոշ տիպի ամբողջական պատկերը տալու համար՝ դերասանը պէտք է կարողանայ իր միմիկայով, շարժումներով, արտայայտություններով նմանվել այդ տիպին այնպէս, ինչպէս Նրան գծագրել է հեղինակը։ Նա պիտի խօսի նրա լեզուով, ուրախանայ նրա ուրախութիւններով, տրամի նրա վշտով, ժոռանայ իր եսը, իր սեփական անհատական կեանքը բեմի վրա և տարվի այն հոսանքով, որը պահանջում է պիէսայի ոգին, նրա գործող տիպերի գիտակցական և զգացողական աշխարհի համակարգութիւնը։

Այդ երկրորդ պահանջին բաւարարութիւն տալու համար՝ դերասանը պիտի որոշ շօշա, տեխնիկական կրթութեան որոշ շրջան անցնի։

Երրորդ՝ դերասանը պիտի կարողանայ իր երևակայութեան մէջ ստեղծած տիպի կմաղքին հոգի, կենդանութիւն տալ, որպէսզի նա կարողանայ բեմի վրա ապրել, և այդ՝ այնպիսի մի կեանքով, որ հասարակութեանը մատնակից անի այդ կեանքին և բամպան փշրելով բեմը միացնի դահլիճի հետ։

Այս երրորդ և ամենակարևոր պահանջին բաւարարութիւն տալու անհրաժեշտ նախապայմաններ հանդիսանում են յիշեալ երկու պահանջների զոհացումը։

Այդ երեքը բնութիւնից միաժամանակ չէ տրվում ոչ միայն հասարակ, այլև տաղանդաւոր մահկանացուներին։

Կոկլէն, Կայնց, Քին, Կոմիսարժեվսկայա և այլք անպամ այդպէս չեն ծնվել։ Բայց նրանց աշխատանքը, անցած շրջան աշխարհահռչակ տեղ է տուել նրանց։

Հայ դերասաններից գրեթէ ոչ ոք չէ ենթարկվում այս կշռափին։

Մենք չենք ժխտում, որ հայ դերասանների մէջ կան շնորհքով և նոյնիսկ տաղանդով մարդիկ։

Բայց մեր վերև դրած պահանջներին բաւարարութիւն տալու համար՝ դա շատ քիչ է։

Հարկաւոր են լուրջ միջոցներ ցաւը բուժելու համար։ Իսկ այդպիսի միջոցներից մէկը, մեր համեստ կարծիքով, կարելի է համարել դերասաններ պատրաստելը, եթէ կարելի է այսպէս ասել։

Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է պարբերաբար ուղարկել մայրաքաղաքները շնորհքով սիրողների և դերասանների և տալ յարմարութիւն, որպէսզի նրանք կարողանան կրթվել, դաստիարակվել, դերասանական արուեստ, հմտութիւն ձեռք բերել, որոշ շօշա անցնել և ապա վերադառնալ և իբրև պատրաստված դերասան բեմ բարձրանալ։

Այդպիսի դերասաններից բաղկացած խումբը հետաքրքրական թատրոն, ճոխ բեմադրություններ կը ստեղծէ հայ իրականութեան մէջ, և մէջտեղից կը վերանայ այն սառնութիւնն ու անտարբերութիւնը, որը գոյութիւն ունի հայ թատրոնի և հասարակութեան միջև։

Եթէ հայ հասարակութիւնը իր հիմարկութիւններով ու հարուստ անդամներով կարողանում է տասնեակներով ու հարիւրաւորներով թոշակաւոր ուսանողներ ունենալ զանազան բարձրագոյն դպրոցներում, նոյն հասարակութիւնն ու հարուստները կարող են ունենալ և մի քանի դերասան թոշակաւորներ։

Հ. Դրամ. Ընկերութեան կատարելիք դերը մեծ է այդ ուղղութեամբ։ Ամենից շատ և ամենից առաջ նա պիտի մտածի դրա մասին և, որ գլխաւորն է, այդ մտածածը իրագործի։

Հայրիկ Տէր-Պողոսեան

Մոսկվա

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՖՈՆԴ

Կովկ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է Գրիգոր Մատեոսովիչ Առաքելեանից (Պետերբուրգից) 2,000 ռուբլի, Հալաթարի էջմիածնեցոց դպրոցի հոգաբարձութիւնից 16 ռ., Սոֆիա Արղութեան-Երկանաբազուկից 25 ռ., բժ. Արիստակէս Զարգարեանից 10 ռ., Գ. Ամբարդանեանից 100 ռ., բժ. Ա. Կարապետեանից 10 ռ., Յակ. Շաւարշից 5 ռ., տիկ. Աննա Մադաթեանից 100 ռ., Վերին-Ագուլիսի դպրոցի աւ.-ուս. սուցիչ Ց. Տէր-Յակոբեանի միջոցով Վերին-Ագուլիսում ժողովված 80 ռ. 81 կոպ., Նիկոդ. Աւագեանից (Աստրախանից) 5 ռ., Երևանի իգական դպրոցի աւ.-վարժուհի Մ. Տէր-Թովմասեանի միջոցով ժողովված 11 ռ., Սարուշէնի դպրոցի վարժուհի Ա. Մադաթեանի միջոցով ժողովված 1 ռ., Ուզունլարի ուսուցիչ Մ. Տիտանեանի միջոցով ժողովված 11 ռ. 41 կ., Մէլիտոպոլի քահ. Վահան Մամիկոնեանի միջոցով ժողովված 50 ռ., Ընկ. Աղնախի ճիւղի վարչութեան միջոցով ժողովված 21 ռուբ.։

Ինչպէս լսում ենք, Թիֆլիսի ժողովարանը և Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերութիւնը որոշել են իւրաքանչիւրը 1,000-ական ռուբ. յատկացնել դպրոցական-ուսուցչական ֆոնդի համար։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Դեկտեմբերի 14-ին, ցեր. ժ. 4-ին, վինուորների և կօզակների հսկողութեամբ դուրս բերին Մետեխի բանտում «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործի ատիթով մեղադրվողներին և տարան կայարան, որտեղից ուղարկեցին Պետերբուրգ, ուր յունվարի 17-ին կը սկսվի «Դաշնակցութեան» գործի հսկայական դատը։

✦ Դեկտեմբերի 27-ին Թիֆլիսում կը բացվի տեղական նկարիչների պատկերների ցուցահանդէս։

✦ Այսօր նշանակված է մէշչանների ընկերութեան լիազօրների ժողովը մի քանի հերթական հարցերի համար։

✦ Ժողովրդական համալսարանի ընկերութեան նախաձեռնութեամբ կիրակի, դեկտեմբերի 18-ին, ժողովրդական Տանը տեղի կունենայ երկու դասախօսութիւն. 1) Թիֆլիսի 1-ին իգական գիմնազիայի դասատու Լիւբատովիչը կը կարդայ ատղաբաշխութեան մասին մոգական նկարներով։ 2) Տ. Մարգարեանը կը դասախօսէ անհատականութեան մասին։ Գները 5—10 կ.։ Սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին։

✦ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը 100 ռ. է նուիրել Պիրագովի անուան ռուս բժիշկների ընկերութեանը՝ Մոսկվայում Պիրագովեան տուն հաստատելու համար։

✦ Բժ. Գամբաշիձէն, որ ունի երեխաների սանատորիա Պատարա-Ցէմիում, որոշել է նոյն տեսակի սանատորիա բանալ նաև Սուխումում։

✦ Շուտով Ռուսաստանի ներքին նահանգներից էկսկուրսանտներ են գալու Թիֆլիս՝ առաջիկայ տօներին։

✦ Ներքին գործերի մինիստրությունը կարգադրել է նահանգապետներին և քաղաքապետներին՝ պարտաւորեցնել բոլոր դեղատների տէրերին պահել այն բոլոր պարագաները, որոնք անհրաժեշտ են բժշկական օգնութիւն հասցնելու ժամանակ հիւանդների ստամոքսները մաքրելու համար։

✦ Վերադարձաւ Եգիպտոսից բամբակի բերքը ուսումնասիրելուց յետոյ Տարատինովը։

✦ Թիֆլիսի մսագործները դարձեալ խնդրում են քաղ. վարչութեանը՝ փոխել մսի ներկայ սակագինը, որ, նրանց ասելով, վնասաբեր է։

✦ Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ փողոցային կանոնաւոր երթևեկութիւնը խախտելուն համար Ալէքսանդր Զիսօձէն ենթարկվում է 65 ռ. տուգանքի։

✦ Ոստիկանութիւնը կալանաւորել է Յովհ. Սուզիևին, որ կատարել է բազմաթիւ յանցանքներ և սպանութիւններ և որոնվում էր դատարանից։

✦ Դլդան գիւղում տեղացի Պավլ Խուսիշվիլիի 15 տարեկան Իսահակ որդին Ջրի կուժը կոտրելուց յետոյ վախենալով հօր ծեծից՝ կախվել է ախոռում և մեռել։

✦ Աբասթումանից մեզ գրում են, որ Խաչ. Մինասեանը իր և իր եղբօր կողմից, ի յիշատակ իրանց նորոգ հանդուցեալ եղբայր Նաղարէթի, նուիրել է Կ. Հ. Բ. Ընկ. տեղական նորաբաց ճիւղին 25 ռ.։

✦ Դուշէթից մեզ գրված մի նամակից իմանում ենք, որ տեղական ծխատէր Յուսիկ ք. Ապրիլեանը, իր նախկին ուսուցիչ՝ նորոգ հանդուցեալ Արսէն աւ.-ք. Բագրատեանու դաղաղի վրա պսակ դնելու փոխարէն, նուիրել է տեղական ծխ. դպրոցի աղքատ աշակերտների օգտին 3 ռ., պատրաստակամութիւն յայտնելով դարձեալ իր լուման չը խնայել, երբ հանդուցեալի յիշատակը յաւերժացնելու մտադրութեամբ ընդհանուր ոյժերով մի որևէ բանի ձեռնարկվի։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Օդեսայի նոր քաղաքապետ Սոսնովսկին յայտնել է հետևեալը. «Ես եկել եմ՝ որպէս զի ամենից առաջ հանգստութեամբ և անկողմնապահութեամբ ուսումնասիրեմ Օդեսայի դրութիւնը։ Կարծում եմ, որ մեծ օգնութիւն դրանում ինձ ցոյց կը տայ մամուլը, որի վրա ոչ մի ճնշում չի գործադրվի»։

✦ Լուրերի համաձայն Զէլիմ-խանը կարողացել է դարձեալ փախչել այն կիրճից, որ չորս կողմից շրջապատել էին ռուսաց զօրքերը պահակների հետ։ Կիրճը պէտք է յոգս ցնդէր։ Զէլիմ-խանը փախթիվելով մի քանի հատ եափնջիների մէջ՝ իրան նետել է ժայռի գլխից ցած և այդպիսով փախել ազատվել։

✦ Ռուսաց զեկավար շրջաններում կարծում են, որ պարսկական ներկայ անակնկալ դէպքերը արդասիք են արտաքին ազդեցութեան։

✦ «Н. В.»-ն հաղորդում է, որ պարսիկներին զեկավարում են կովկասեան հայերը։ Լրագիրը պահանջում է, որպէսզի բոլոր զէնք ունեցողները գնդակահարվեն։ «Ամբողջ Թաւրիզը,—ասում է լրագիրը,—արիւնով պէտք է պատասխան տայ դեկտեմբերի 7—11-ի օրերի համար։

✦ Դրութիւնը Թաւրիզում օրհասական է։

✦ Թէհրան-Թաւրիզ հեռագիրը չէ գործում։ Ռուսների կորուստները հաշվվում են 150 սպանված ու վիրաւոր։ Ռուսաց փոքր զօրամասի դրութիւնը վտանգաւոր է։

✦ Շուստեր-Մօրգանը հեռագրում է Լօնդոն, որ Թէհրանի վրա են արշաւում հիւսիս-արևելքից էկս-շահի կողմակից 2,000 աւազակ թիւրքմէններ։ Նրանց դէմ կառավարութիւնը կարող է հանդէս բերել միայն 600 զինուոր։

✦ Կրասնովոդսկից հեռագրում են։ «Նախկին պրիստաւ իրաւաղուրկ Բօրովը ձեռնարկել է խմբեր կազմել ինգուշներից և այլ լեռնականներից Մահմէդ-Ալիի օգնութեան համար։ Բօրովի գործերը ըստ երևոյթին լաւ են գընում։ Այդպիսով էկս-շահի վերադարձի մասին հոգում են նոյն իսկ նախկին բանտարկեալները»։

✦ Եանինի զօրաբանակի օֆիցէրները Թիւրքաց մեծ վէզիրին և պարլամենտի նախագահին սպառնական հեռագիր են ուղարկել՝ թէ կարշաւեն Կ. Պոլսի վրա, եթէ կուսակցութիւնների վէճերը կը շարունակվեն։

✦ Յայտնի մալիսօրները նորից ապրստամբվել են Թիւրքիայի դէմ։ Ապրստամբութիւնը համարվում է Աւստրո-Ունգարիայի գործ։

✦ «Н. В»-ն. կտրականապէս հերքում է մինիստր Տիմաշեվի և սրաօգնական Բարկի հրաժարականի լուրերը։

✦ Զը նայած հերքման, Բերլինում յամառութեամբ խօսում են Կ. Պոլսի ռուսական Զարիկովի հրաժարականի մասին։

✦ Լուրերի համաձայն, գահընկէց դալայ-լաման խորհր մի ջոցներով մեկնել է Մոնգոլիա։ Նրան աջակցում է մի մեծ պետութիւն։

✦ Իսանշիկայը եռանդուն գործունէութեան համար պարգևատրվեց ոսկեայ ու արծաթեայ medալներով։

✦ Իսանշիկայը կամենալով օրինակ տալ, գնեց 400 հազար դօլլարի ներքին հայրենասիրական փոխառութեան բաժնեգրեր։ Սակայն փոխառութիւնը տապալվեց։

✦ Ճան. հաղ. մինիստր Ռուխլովը Կոկովցեվին ներկայացրեց Բագու-Զուլֆա-Թաւրիզ երկաթուղու կառուցման վերջնական նախագիծը։ Գիծն անցնելու է Արաքսի ափով՝ Մուղանի միջով՝ դէպի Զուլֆա։ Աշխատանքները կը սկսվեն 1912 թի գարնանից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
14 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը մեկնեց Սէվաստոպոլի գնացքով։

ՆԻԿՕԼԱԵՎ։ Սլօբոդկայում յանցաւորներին ձերբակալելու ժամանակ սպանվեցին 2 թաղական վերակացու և մինը ծանր վիրաւորվեց։ Կալանաւորվեց 6 մարդ։ Ձերբակալվեցին շատ կասկածելիներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Զմերային երթևեկութիւն)
(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ (I, II և III կարգի վագոն.) 10 ժ. 20 ր. առաւ., Ադստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բաքու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդասեր** № 6 **գնացքը**՝ (միայն I և II կարգի վագոն.) 3 ժ. 33 ր. ցեր., Ադստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բաքու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պոսասեր** № 4 **գնացքը**՝ (բոլոր կարգերի վագոններով) 11 ժ. 18 ր. գիշ., Ադստաֆա է հասնում՝ 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ, 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 բօպէին կէսօրվայ, Բաքու՝ 4 ժամ 52 բօպէին ցերեկվայ։ **Խաղ** № 106 **գնացք**՝ (IV կամ III կարգի վագոններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Ադստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բաքու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդասեր** № 74/75 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդասեր-ապրանքատար** № 78/79 **գնացքը**. 5 ժ. 34 ր. երեկ., Պարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնք չէ գնում։

ԲԱԹՈՒՄԻ՝ **Մարդասեր** № 5 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պոսասեր** № 3 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդասեր** № 7 **գնացքը**՝ (II և III կարգի վագոններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐՇՕՄ՝ **մարդասեր** № 9/66 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագոն.) 3 ժ. 23 ր. ցեր., Դօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրշօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **Մարդասեր** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պոսասեր** № 3 **գնացքը**՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ** № 1 **գնացքը**՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնք չէ գնում։ **Խաղ** № 107 **գնացքը**՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պոսասեր** № 72/73 **գնացքը**՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդասեր-ապրանքատար**՝ № 80/81 **գնացքը**՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդասեր** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պոսասեր** № 4 **գնացքը**՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդասեր** № 8 **գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բաքու չէ գնում)։

ԲՕՐՇՕՄԻՑ՝ **Մարդասեր** № 8/10 **գնացքը**՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Զմերային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագոն փոխելու հաղորդակցութիւն՝ Բաքուի-Բօստովի-Խարկովի վրայով Ընդլովկասեան գծի արագ № № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ կուպէ և վագոն I և II կարգի և մէկ վագոն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մոսկվա յետ և առաջ, առանց վագոն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բաքուի-Բօստովի և Կուրսկի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ կուպէ և վագոն I և II կարգի, որի համար վճարվելու է յատկապէս արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ռ. I կարգում և 6 ռ. II կարգում։ Թիֆլիսից-Մոսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագոն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բաքու-Բօստով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐ
«606»-Ի ՆԵՐՍԲՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վնասական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ՈՂՍՍԱԲԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆՍՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Գ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԻՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺՇԿ Գ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—126

ԲԺԻՇԿ
Ց. ՄԵԼԻՔ-ՆՈՒՐԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մանագիա. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 12—1-ը։
(երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—40

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՑՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔԻՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տելէֆոն 388.
(չ.ու.կ.) 761. 100—55

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(կ. չ. ու.) 669. 100—88

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեղուաբուժ. Կովկասեան Ընկերութիւնը դեկտ. 20-ից բացում է ԲԱԶԱՐ վաճառելու համար
ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂՐ՝
Կովկասեան Գիւղատնտ. Ընկերութեան շինութեան մէջ,
Բարեատինսկայա փ., Ալէքսանդրեան այգի
(ու.կ.) 1172. 5—1

Լոյս տեսաւ
„ՆՈՐ-ԿԵԱՆՔ“
Հանդէսի № 1—2, 96 մեծադիր էջ, գինը 30 կոպ.
Բովանդակութիւն
1) Շ. Կուրղինեան. «Մուրացիկ տղան», (բանաստ.), 2) Նարսեան. «Հայոց կաթողիկոսութիւնը», 3) Ալ. Ռուբէնի. «Դրական նկատողութիւններ», 4) Էմիլ Վերհարն. «Սեղանաւորը», թարգմ. Դ. Նորկ, 5) Դ. Անանուն. «Բանաւորների պետական ապահովագրումը հիւանդութիւնից», 6) Ալ. Մարտունի. «Հասարակական դասակարգի մասին», 7) Դ. Տէր-Դանիէլեան. «Նաւթարդիւնաբերական հայ բանուորի նկարագրից», 8) Օհանեան. «Ղազարոս Աղայեան», 9) «Մատենախօսութիւն»՝ ա) Տէրտէրեան՝ Միք. Նալբանդեան—ազդութեան հրապարակախօսը, բ) «Նոր-Խօսք» № 1—2, գ) «Դրուագներ հայոց պատմութիւնից», հր. Կուլտ. Միութեան, դ) Ե. աւ. ք. Գեղամեան. «Պատմական քաղուածքներ», 10) Լ. Ա. «Հրաժեշտ» (բանաստ.), *** (բանաստ.), 11) Ներքին տեսութիւն. Սուբբոթեան՝ «Արժէքների վերագնահատութեան անհրաժեշտութիւնը», 12) Արտաքին տեսութիւն. Միք. Շամչեան՝ «Թիւրքիտալական պատերազմը», 13) Պոլ Լաֆարգ, 14) յայտարարութիւններ։
Խմբ.-հր. Դ. Տէր-Դանիէլեան
Օտար քաղաքներից դիմել՝ Баку, ул. Гоголя, д. Мухтарова, зубн. врачу Мартиросу Каграманянцу. 1167. 1—1

ԴԵՐՁԱԿ
ԼԵՒՈՆ ՃԷՊԷԵԱՆՑ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Դիլիջանայ փողոց, Վրաց Աղնուական. Բանկի շինութեան քակը, թատրոնի մօտ։
(կ. չ. ու.) 1111. 10—10

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ
ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ
Նեվրասթենիայով, սեռական թուլութեամբ, զառամութեամբ, իստէրիկայով, նեվրալգիայով, սակաւարիւնութեամբ, թոքախտով, սիֆիլիսով, սնդիկային բժշկութեան հետեւանքներով, սեռի հիւանդութիւններով (չաղութիւն, որտի պնդախտութիւն, սրտի բարախտում, պէրէոյ, միօպարդիա), զարկերակի կարծրացումով, ալկոհոլիզմով, ողնաուարի հիւանդութեամբ, կաթուածներով, հիւանդութիւններից առաջացած թուլութեամբ, յոգնածութեամբ և այլն։
Օրէ-ցօր ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ շատացող պահանջը առաջ է բերել բազմաթիւ փորձարժէք և առողջութեան համար վնասակար նմանողութիւններ։ Այդ պատճառով իսկ, մենք պարտք ենք համարում նախազգուշացնել հիւանդներին նմանօրինակ միջոցներից։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ դիտողութիւնները զինակոնների և բժիշկների կողմից՝ վերոյիշեալ հիւանդութիւնների վերաբերմամբ ունեցած փայլուն հետևանքների մասին՝ վերաբերում են բացառապէս ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, դրա համար և հարկաւոր է ուշադրութիւն դարձնել «ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ» անուան վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները միայն նմանողութիւններ են ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, որոնք ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ։ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ գինը 3 ռուբլի է։
Ցիշեալ նմանողութիւնների սակաւարժէքութիւնը պարզելու համար հրատարակված է առանձին բրոշիւր, որը ուղարկվում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ եղած նոր գրականութեան հետ միասին՝ ըստ առաջին պահանջման։
ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՈՖԵՍՍՈՐ ԴՈԿՏՈՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԹՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում, В. О., 7 лин. 18.
(П.95413) 12—11
ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ